

Բաժանորդագիրն ԿԱՆԻՒԻԿ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 դր2, Ռուսիոյ համար 5 րուպլ-ին, ուրիշ երկիրներու համար x2 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան նաւակաղորդմ կ'ընդունուի:

ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար դիմել

Առ ՏԵՐԵԳ-Հրատարակիչ

ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ

Պոլիս, Պանդ-Գաբու, Թաշ Խան, Թիւ 50

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

درعليه ده بفتح قوسنده طاش خاندہ

• نومروده «زاعیک» غزه سی مدیری

• بالاقاشیان حوزان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

• CONSTANTINOPLE

40 Փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 39

ՇԱԲԱԹ

30 ՕԳՈՍՏՈՍ 1892

ՎԵՐԱԲԱՅՈՒՄՆ

ԾԱՂԻԿ, որ Տպագրական Տեսչութեան կողմանէ յուլիս 9 էն ի վեր դադարման դատապարտուած էր անորոշ ժամանակաւ, նոյն Տեսչութեան արտօնութեամբ վերստին կը սկսի հրատարակուիլ, չնորհիւ բարեսրտութեան աղնուղարմ և լուսամիտ Տեսուչ Վսեմ. Պէճէթ պէյի, որուն պարտաւոր կ'զգամք զմեզ հաւարակաւ յայտնել մեր խորին երախտագիտութիւնը:

ԾԱՂԻԿԻ բաժանորդք վնաս չունին այս դադարումէն. «Ծաղիկ» բաժանորդագրութիւնը տարեկան 52 թուոյ վրայ է, և մէն մի բաժանորդ իւր բաժանորդագրութիւնը լրացնելու չափ թիւ պիտի ստանայ:

ԾԱՂԻԿԻ դադարումէն օգուտը աղելով, խմբագրական նորանոր կարգադրութիւններ ըրած եմք, որոց չնորհիւ պիտի կարողանամք յետ այսորիկ առաւել խնամեալ, առաւել օգտակար ու հրահանգիչ տեսութիւններ և ուսումնասիրութիւններ տալ վայելել մեր ընթերցողաց: Ինչպէս ցարդ, այսուհետեւ ևս մերթելով պիտի մերժեմք վրան խոսք, այսինքն անբարոյական գրութիւններն, որք ընթերցողն ապականելու միայն կը ծառայեն, և որք իրաւամբ դատապարտուած են ուսմէն օր կը դատապարտուին Եւրոպական քաղաքակիրթ ազգերէն, նոյն իսկ Ֆրանսայէն:

ԾԱՂԻԿԻ բաժանորդագրութիւնը Պօլսոյ և գաւառաց համար կը մնայ միշտ տարեկան 50 դրու: Միայն գիտնալով որ գաւառացի աղքատիկ ուսուցիչք և քահանայք լրագիր ստանալու փափաք ունենալով հանդերձ, այդ 50 դրուին իսկ չը կրնալով վճարել՝ առանց լրագրի կը մնան յաճախ, որոշած եմք մեր կողմանէ զոհողութիւն մ'ընել այդպիսեաց համար: Գաւառացի ուսուցիչք յետ այսորիկ պիտի վճարեն տարեկան 40 դրու: աղքատիկ գիւղերու քահանայք 30 դրու: Անոնք որ իբրեւ ուսուցիչ բաժանորդագրութեան համար պիտի դրեն մեզ, պարտին տեղոյն Առաջնորդէն կամ Առաջնորդական-Փոխանորդէն պաշտօնական թուղթ մը ևս զրկել մեզ իրենց ուսուցիչ լինելը վկայող:

Գաւառաց մէջ ո՞րչափ աղքատիկ գիւղեր, ո՞րչափ դպրոցներ կան ուրոնք ամենեւին լրագրի երես չեն տեսներ, մինչդեռ անհրաժեշտ է որ ստանան դէթ «Ծաղիկ» ի նման չաբաթաթերթ մը: Մեր ունեւոր դատու ազգայինք, նոյն իսկ միջակ կարողութեան տէր ազգայինք, ի՞նչ մեծ բարիք ըրած կը լինէին այդ գիւղօրէից, այդ վարժարանաց, եթէ իրենցմէ իւրաքանչիւրն առանձին կամ քանի մը հոգի միացած, այսպիսի չաբաթաթերթ մը մէկ մէկ օրինակ նուիրէին այդ տեղերու: Լրագիրն ալ դպրոց է, և այդպիսի տեղեր լրագիր զրկելը մէկ մէկ դպրոց բացած լինելու չափ նշանակութիւն պիտի ունենար լուսոյ ծարաւի այդ վայրերու համար:

ԾԱՂԻԿԻ ուղղութեան համակրողներէն, «Ծաղիկ» բարեկամներէն կը խնդրեմք մասնաւորապէս որ ամենուրեք աշխատին տարածել զայն, տալով մեզ նորանոր բաժանորդներ, միակ պայման որով «Ծաղիկ» պիտի կարողանայ պահել իւր գոյութիւնը և մնալ անթաւամ: Մեր ստանձնած ծանր գործոյն մէջ մեզ պէտք է աշակցին մամուլ բարեկամք. առանց

այս աշակցութեան՝ լրագրութիւնը չէ կարող պահել իւր գոյութիւնը և զարգանալ:

Այս առթիւ կը խնդրեմք «Ծաղիկ» բաժանորդագրութեան պարտք ունեցողներէն որ փութան կարգադրել իրենց հաշիւը, յիշելով որ լրագրոյ մը հրատարակութեան գործին մէջ ապաւիլ բան չը կայ. տպարան, թուղթ, փուլ, փօստ, ցրուիչ, ևս ամէնքը կանխիկ կ'ստանան:

ԳԱՂԱՓԱՐԸ

Մարդը ճանչնալ, բարոյական այդ կենդանիին խորհելու եղանակն ուսումնասիրել ահա ինչ որ չափազանց դժուարին գործ է: Եթէ ամէն ոք իւր խորածին պէս գործելու լինէր, եթէ մարդ պահած լինէր վայրենիի պարզութիւնը, խնդիրը շատ կը դիւրանար. բաւական պիտի լինէր յայնժամ ակնարկ մը նետել մարդկային գործոց վրայ՝ վճռելու համար թէ այս ինչը բարի է և այն ինչը չար: Փորձը մեր անձին իսկ վրայ ընելով, կը տեսնեմք որ մեր գործերը յաճախ չեն համապատասխաներ մեր գաղափարաց, որով պէտք է սխալ նշկատել սա տրամաբանական առաջարկութիւնը (prémisse) թէ, մարդս իւր գործէն կը ճանաչուի: Այս առաջարկութիւնը սակայն, մեր մտքին մէջ խորարմատ տպաւորութիւն ձգած է դժբաղդարար և մեք առածի կարգ անցած ճշմարտութիւն մը կը դաւանեմք զայն ընդհանրապէս: Եւ ըստ որում տրամաբանական սխալ առաջարկութիւն մը սխալ հետեւութիւններու միայն կ'առաջնորդէ, մարդը գնահատելու մասին մեր ընտրած միջոցները և մեր ունեցած համոզումները սխալ կը լինին յաճախ: — Մեք մինչ ցարդ սովոր եմք մարդոց արարքներուն ուշի ուշով հետեւիլ. երբ

այդ արարքներ մեր հաւանութեան ար-
ժանանան, անոնց հեղինակները կը մը-
կրտեմք բարի, ազնիւ, առաքինի և այլ
չգիտեմ ինչ մակդիրներով, իսկ երբ
ընդհակառակը զգուանք ու պիտեմք
ազդեան մեզ, յայնժամ այդ մակդիրնե-
րու հակառակները անոնց երեսին կը զար-
նեմք համարձակ: Մարդը գնահատելու
համար այս սահմանէն անդին չեմք անց-
նիր: Բայց արի տես՝ որ տարիներով միշտ
բարի նկատուած գործոց հեղինակ անձ-
նաւորութիւն մը յանկարծ կը փոխուի
երբեմն և իւր նախկին ընթացքին բոլո-
րովին հակոտնեայ ընթացք մը կը բռնէ:
ահա՛ այն ատեն է որ կը շուարիմք կը
մնամք: մեր ուղեղը իւր բոլոր ճիգը կը
թափէ միևնոյն անձնաւորութեան այս
երկու իրարու հակասական արարքները
վերլուծելու համար, մեղմացուցիչ պա-
րագայ մը, արդարացուցիչ պատճառ մը
գտնելու համար: Բայց չյաջողիր: այն
ատեն սխալ ճամբու մը մէջ կ'իյնամք և
կը հետեցնեմք թէ աշխարհի մէջ բնաւ
բարի մարդ չկայ, քանի որ ամենէն բարի
նկատուածներն ունեւոր հուսկ ուրեմն
իրենց ուղղութիւնը կը փոխեն: Այս սը-
խալ հետեւութեան չենթարկուելու հա-
մար պարտ է վերոյիշեալ տրամաբանա-
կան առաջարկութիւնը սա կերպ բարե-
փոխել—մարդս իւր նպատակէն կը ճա-
նաչուի: Եւ արդարեւ, մարդոց իսկական
արժանիքը գնահատելու համար ուղղակի
իրենց նպատակին նայելու է: մարդ,
երբեմն, բարի նպատակով, անգիտակ-
ցարար չարիք կը գործէ: այդպիսին չը-
դադրիր սակայն բարի լինելէ: Կան ալ
որք մեծագոյն չարիքներ պատրաստելու
կամ սքողելու նպատակաւ բարիք կը
գործեն, ինչ որ իրենց ու է կերպիւ
իրաւունք չտար բարի նկատուելու և
ոմանց տկարամտաց կողմանէ բարեբար
յորջորջուելու: այս վերջին պարագային
մէջ, երբ չինծու բարեբարը, իւր բուն
գոյնը դուրս կուտայ, բնաւ տեղի չկայ
զարմանալու, իրար անցնելու: ո՞վ ըսաւ
թէ մարդը փոխուած է: նոյնն է՝ ինչ
որ էր առաջ: միայն գործերը փոխուած
են և գործերը ուղիղ չեն համեմատիր
իւր նպատակին: Այսպէս ուրեմն, ամէն
պարագայի մէջ նպատակն է կենսական,
աւագ կարեւորութիւն ունեցողը: Այլ
այդ նպատակն ուղիղ ճամբու մէջ գնելու
համար, պէտք է ունենալ ուղիղ գաղա-
փարներ: Եւ ո՞վ է որ պիտի տայ մեզ
զայնս, այդ ցանկալի ուղիղ գաղափար-
ները: Կրօնքը, պիտի ըսէի, բայց գու-
ցէ այս տողերը կարդացողներէ: շատեր
զիս քարոզչի տեղ դնեն և այս յօդուածը
իւր քարոզչի նկատեն: և սակայն, ես
պիտի ընդդէմ թէ աշխարհի մեջ անկրօն
մարդ չկայ: նոյն իսկ անոնք որ իրենք

ցիրենք ծայրայեղ անհաւատներ, բա-
ցարձակ անկրօններ կը դաւանին, ա-
նոնք ևս կրօնք ունին անգիտակցարար:
զի կրօնքը, ինչ որ ալ լինի իւր ձեւը,
ուղղակի խղճմտանքէն ծագումն կ'առ-
նու: ուրացէ՛ք խղճմտանքը՝ ես ալ ձեզ
հետ ուրանամ կրօնքը: Բայց երբ խղճ-
մտանքն ուրանամք, միտքը ուրացած
կը լինիմք, զի խղճմտանքը մտքին տրա-
մարանական մէկ դատողութիւնն է լոկ:
արդ, եթէ կ'ուզէք, կրօնք բառը խղճ-
մտանքով տեղափոխելով, յայտարարեմք
որ ուղիղ գաղափարները ծագում կ'առ-
նուն խղճմտանքէն: Այսու հանդերձ,
ամէն բան այսչափով չլինար: ինչպէս
որ ամէն ոք միտք ունի, այսպէս ալ
ամէն ոք խղճմտանք, այսինքն մտքի ու-
ղիղ դատողութիւն ունի: Բայց ինչպէս
ամէն մարդու մտաւոր կարողութիւն-
ները նոյնը չեն, այսպէս ալ ամէն մարդ
խղճմտանքի հաւասար զարգացում չու-
նի: և անոնք որ այս տեսակէտով ամե-
նէն աւելի աղքատ մնացած են՝ ամենէն
աւելի անոնք կը չեղին ուղիղ գաղա-
փարներէն: Պակասութիւն մը խոստո-
վանին ամօթ բան չէ: Համաձեւք ու-
րեմն յայտարարել թէ մեր հասարակու-
թիւնը, ինչպէս ուրիշ շատ մը բաներու
մէջ, խղճմտանքի զարգացման մասին ևս
շատ աղքատ մնացած է: Գաղափարներ,
որքան ևս նուիրական, թեթեւ իմն մեր
խղճմտանքի եզերքէն միայն քերելով
կ'անցնին: այդ գաղափարներէն անհե-
թեթ չեղումներ կ'ունենամք յաճախ ան-
վրդով խղճով: բարոյապէս քանի՛օն կը
մեծնայ այն անձնաւորութիւն՝ որ եսա-
կան անձուկ չահեր առաթուր կը կոխէ
միմիայն ուղիղ գաղափարի մը պահպան-
ման համար: ասիկայ մեծ գործ մ'է
սոսկական անհատի համար: այլ դիւ-
ցազնական վսեմ գործ մը և միանգա-
մայն պարտականութիւն մ'է հանրային
պաշտօնէի մը համար: դրամով հա-
րուստներուն պէս՝ խղճմտանքով հա-
րուստներն ալ հազուադէպ են: Բայց
գոնէ հասարակութեան մը ղեկը իրենց
ձեռքին մէջ առնող անձինք զուրկ լինե-
լու չեն այդ հարստութենէն: Միևնոյն
ատեն սա ևս յիշեցնեմք թէ ազգ մը
ճիշդ նոյն չափով կը յառաջդիմէ՝ որ չա-
փով որ ուղիղ գաղափարներ մուտ կը
գտնեն և կը մշակուին հանրութեան
բոլոր խաւերուն մէջ:

Այդ ուղիղ գաղափարներուն առա-
ջին թշնամիները մեզ պիտի լինիմք, զի
անոնք խոստաբարոյ ուսուցիչներ պիտի
լինին մեզ համար: Կեղծիք չպիտի սի-
րեն, կողմնակի շահերը ընդհանրէր չա-
հերուն մէջ պիտի խեղդեն, աւերւոյթ
կարգ մը բարիքներէ, պատիւներէ և
փառքերէ: պիտի զրկեն զմեզ: Բայց ի-

րենց խոթող դէմքին տակ կը ծածկուի
ազնիւ, քաջարի նպատակ: եթէ անոնց
նուիրեմք մեր անձը, տարիներու ըն-
թացքին մէջ շատ պիտի փոխուիմք, բա-
րոյապէս նոր մարդ պիտի դառնամք:

Ինչպէս ուրիշ առթիւ ալ այս թեր-
թին մէջ կարծիք յայտնած եմք, մեզ
համար այդ ուղիղ գաղափարներով օժ-
տուելու ուրիշ միջոց չկայ՝ բայց եթէ
գալրոցական երկարատեւ հաստատուն
դաստիարակութիւն: Չափահասներու
համար միևնոյն բարեբար ազդեցութիւ-
նը պիտի ունենար կրօնական խնամաւ
կրթութիւն մը՝ քարոզի և կրօնական
թերթի ձեւով (ծիսաւանդութիւն չհաս-
կնաք:), և սակայն մտքէ չէք հաներ
անշուշտ թէ մատաղ տունկը աւելի շուտ
կը շտկուի քան հաստարուն ծառը: Յա-
ւալին այն է որ տակաւին կղերը բան
մ'ըրած չէ ժողովուրդը մեր երազած
ուղիղ գաղափարներով օժտելու, և
գալրոցներն ալ ակնկալուածէն շատ քիչ
ըրած են դեռ: Մօնթէքրիսթօյի հետ
վերջացնեմք— ՍՊԱՍԵԼ և ՅՈՒՍԱԼ:

ԼԵՒՈՆ ՄԻՐՏԻՉԵԱՆ

Շ Ա Ր

ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ

—

Ե.

ԳԷՈՐԳ ՊԱՏՈՒԵԼԻ ՊԱԼԱՏԵՅԻ

ՎԵՐՋԱՏԱՆ

Մեծանուն Գէորգ պատուելոյն կեն-
սագրութիւնն « Մաղիկ » 37րդ թուով
աւարտելէ յետոյ, կուգամ յաւելու
նոյն կենսագրութեան լրացուցիչ մաս
մ'ես:

Մաղիկի վերջին թուով յարգելի ծե-
րունի բանասէր մը կը դիտէր թէ՛

« Վենետիկ տպուած Հնախօսութեան
և Օսմ: Պատմութեան հեղինակը Գէորգ
—Դպիրն է: ասոր ամենեւին տարակոյս
չկայ: ասոր ապացոյց են Հնախօսու-
թեան մէջ Օսմ: հազուադէպ տպամիջ-
ներէն բերուած վկայութիւնները, վասն
զի ո՛չ միայն այս գրքեր վենետիկաց
թանգարանին մէջ չէին գտնուեր, այլ
և նոքա այդ գրքերուն անունն անգամ
լսած չէին: Դարապատումին մէջ ամ-
բողջ հատուածներ կան առնուած Բէսմի
Ահմէտ էֆէնտիի և ուրիշ պատմական
գրքերէն: Ուստի պատուելին իւր մահ-
ուան անկողնոյն մէջ՝ իրաւամբ ըսաւ բա-
րեկամաց թէ, « ի Վենետիկ տպեալ ո՛ր
գրքին մէջ որ, ի թուականին ճիշդեթի
բառերը կը տեսնէք, այն իմ հեղինակու-
թիւնս է: Թէ և ուրիշ շատ հեղինակու-

թիւներ ալ ունիմ, բայց չպիտի կրնաք գիտնալ իմ ըլլալը. միայն ձեզի միտի-թարանք ըլլալու համար կ'ըսեմ որ 'ի քուսակաւնիս հիմքի բառերը կրող գըրքերն ապահով կերպով իմ համարեցէք»:

Յարգելի դիտողագրին պէս ուրիշներէ ալ արտայայտուած են մի և նոյն գաղափարներն, սակայն վերոյիշեալ պատուականաց պատուականագոյն ծերունին՝ ոչ միայն Գէորգ-Դպրի մասին, այլ և ուրիշ երեւելի ազգայնոց նկատմամբ ալ մանրասլառութեամբ տեղեկութիւններ և հարուստ ուսումնասիրութիւններ ունի, և որ փափաքողաց միշտ բարեհաճած է իւր տեղեկութեանց գանձարանն աննախանձաբար պարզել, և մեք պատրաստ եմք միշտ լսել ոչ միայն զինքն, այլ և այդպիսներն՝ ուր ուրեք որ գտնուին, և գանձել իրեւ թանկագին արժէք ունեցող պատմական անոյս նիւթեր՝ գետեղելու համար «Մաղիկ» ի մէջ մեր հետզհետէ հրատարակելիք Հայ կենսագրութեանց շարքին մէջ:

Գէորգ-Պատուելոյն բնագիր երկասիրութիւններէն գաւառներն ևս տարուած են. ծանօթ գրագէտ աշագուրկ Կէօգիւրեան Թադէոս պատուելին մեզ կ'աւետէ թէ՛ յիշեալ հոյակապ Դպրի ձեռագիր կարեւոր հեղինակութիւններէն հատ մ'ալ կը գտնուի Սեբաստիոյ ազգային մեծ վարժարանին թանգարանին մէջ. Փափագելի էր որ վարժարանին տնօրէնութիւնն կամ ուսուցիչք, այդ երկասիրութեան մասին հարկ եղած ծանօթութիւնն հաղորդէին մեզ:

Իսկ մեք՝ իրեւ կնիք և վերջաբան սոյն կենսագրութեան, արժան համարեցանք Եւսեբեայ քրոնիկոն ճառից նկատմամբ վենետիկոյ Աբբաչայր Գեր. Ստեփաննոս Ագոնց Արքեպիսկոպոսին առ Գէորգ Պատուելին ուղղած հետեւեալ պաշտօնաթուղթն անտիտիօս հրատարակել, 'ի վերծանութիւն Հայ Բանասիրութեան:

«Ազնուամեծար և Քրիստոսասէր սիրելոյդ՝ ողջոյն և Աստուածային օրհնութիւն:

«Ի վենետիկ, 'ի 24, ապրիլ 1805

«Մտերիմ սիրոյդ ակորժ ընտանութիւն յորդորէ զմեզ 'ի գրութիւն նամակիս, առ անընդհատ պահպանութիւն նախնի մտերմութիւն ընդ բարեսէր անձինդ, որով զառաջինն մեօք և 'ի ձեռն գրութեան թղթոյ մերոյ ծանօթացեալք, եղաք զհիմն հաղորդութեան սիրոյ ընդ ուխտիս: Թէպէտ երեսօք անծանօթք 'ի միմեանց, այլ սիրով հոգւոյն զօգեալք ընդ միմեանս: Եւ 'ի ձեռն վարդապետաց մերոյ գովելի հանդիսացեալ ձեր 'ի մեզ, անմոռաց ունիմք 'ի սրտի զյիշատակս սիրելոյդ շքեղ պանծանօք անջինջ

արձանագրեալ զանուն ձեր 'ի կարգս բարեսէր երախտաւորաց միարանութեան մերոյ, որոյ պայծառութեան և յառաջադէմն զարգանալոյ՝ մտադիւր փափաքող և խնդամիտ բերկրեցող հաւաստեալ ճանաչեմք զձեզ, նոյն և թելադիր յառաւելն և 'ի կարեւորն և յօգտակարն օր ըստ օրէ փութալան և վաստակակից՝ անտարակոյս մտօք հաւատամք և սպասեմք տեսանել զԱզնուութիւնդ:

«Լուաք 'ի մերոց վարդապետաց պանդխտելոց այդր, թէ կացցէ 'ի քաղաքիդ նախագաղափար Եւսեբեան քրոնիկոն գրոցն, զոր 'ի բազում ամաց հետէ անձկանօք փափաքիմք ստանալ, այլ դժուարիմք գտանել զեղանակն 'ի ձեռս բերելոյ, սակայն որ մեզ դժուարինն է, ձեզ դիւրին համարի գտանել հնարս առ մեզ ձգելոյ զայն, զի մի՛ յանօգուտ տեղիս մնալով պիտանի գործոյն, անպիտան լիցի գանձն յարգի, և զրկեսցի 'ի վախճանէն երկասիրութիւն հեղինակին, որ աշխատեալն է 'ի պայծառութիւն, և ոչ 'ի բանտարկութիւն գործոյն:

«Եւ առ այս աշխատութիւն, զոր յանձնեմք սիրելոյդ հայրաբար, բաց 'ի հայրական օրհնութեան Աթոռոյս և Ուխտիս, զոր շնորհեմք առատապէս, փութամք փոխարինել և երախտեաց բարեսէր անձինդ, որ գովելի արթնութեամբ յօժարամիտ է 'ի ծառայութիւն այդպիսեաց, զորոյ զփորձն առեալ եմք բազում անգամ, որպէս և 'ի սոյն իսկ արդեամբք ունիմք տեսանել, ողջ լերուք:

Մնամք Քրիստոսասէր սիրելոյդ՝

Աղօթարար

ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ԱԳՈՆՑ

Արքեպիսկոպոս Սիւնեաց և

Ընդհանրակիս Արքապայր»

Հայ բանասէրներէն, ազգային գրագէտներէն ո՛վ չի ճանչնար Ագոնց՝ Գեր. Ստեփաննոս Գիւլէր, Հայ Հռովմէականաց հանգ. Սիւնեաց Արքեպիսկոպոսը և Մխիթարեան ուխտին ընդհանրական Աբբան, որոյ գրական արժանիքն՝ անկիւնելի է, և որոյ վարուց պատմութիւնը՝ 1824ին գրած և տպած է Հ. Եփրեմ Վ. Սեթեան:

Հայր Ստեփաննոս Ագոնցի՝ անունը, յատուկ յանձնարարութեան պէտք չունի: Հայ մատենագրութեան մէջ արդէն փայլուն համբաւ կը վայելէ իւր հետեւեալ զնահատելի երկասիրութիւններով:

1. — Ճարտասանութիւն:

2. — Պատմութիւն վարուց Մխիթարայ Աբբայի:

3. — Տեսութիւն սուրբ գրոց Հիմն կտակարանի:

4. — Տեսութիւն սուրբ գրոց Նոր կտակարանի:

5. — Աշխարհագրութիւն:

6. — Հասարակաստութիւն Աշխարհագրութեան: Եւ այլն:

Ունի նաև ձեռագիր բազմաթիւ անտիպ գործեր ու նամակներ, մասնաւորապէս կը յիշեմք Պատմութիւն Տիեզերական Սիւնեոյցաց:

Հայր Ագոնց ծնած է Թրանսիլվանիոյ ճուրճով քաղաքին մէջ 1740 նոյ. 20ին և Ամիրա անուամբ մկրտուած: 1757 յուլիս 25ին վենետիկ գացած և 1758 հոկտեմբեր 28ին կուսակրօնութեան նուիրուած, 1763ին ալ վարդապետ ձեռնադրուած է: 1785 յուլիս 5ին Աթոռակալ և Փոխ-Վանահայր, 1800ին Աբբաչայր շնորուած, 1804 յունիս 3ին Արքեպիսկոպոս ձեռնադրուած՝ Սիւնեաց վիճակին պատուանուամբ, և վախճանած է 1824 յունիս 29ին:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

2.

Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱԶԱՆԱՅ ԵՐԱՄԵԱՆ

Մեր տղայութեան ատեն՝ մայրաքաղաքիս մէջ զոյգ մը Տէր-Երեմիաներ կային, մին՝ ի Խասգիւղ, և միւսն՝ ի Գուժգարու:

Առաջինն՝ Տիրացու Վրդանէս, ժամանակին մեծանուն Հայկաբանը, Տրամաբանը, Տօմարագետը և Աստղաբաշխը լինելու փառասիրութիւնն ունենալով, օր մը Տ. Երեմիա(1) անուամբ քահանայացաւ Խասգիւղի Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյն համար, և 32 տարիներ անընդհատ ազգային Օրացոյցն յօրինելու և տպագրելու առանձնաշնորհութիւնը վայելեց:

Երջանկայիշատակ Ներսէս պատրիարքի օրով՝ սոյն առանձնաշնորհութեան իրաւունքն՝ այրիացեալ Երիցունհինքու յատկացուեցաւ, յետոյ նոր տնօրինութեամբ Ս. Փրկչեան ազգային Հիւանդանոցի հաստատութեան սեփականութիւն դարձաւ:

Այժմ մեր նպատակէն դուրս է սոյն Խասգիւղի Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյ Տ. Երեմիա քահանային կենսագրութիւնն ի հանդէս բերել:

Իսկ երկրորդն էր՝ Մայր-Եկեղեցւոյ Տէր-Երեմիա քահանայ Երամեան, որ քիմեաճի տիտղոսով ընդհանրապէս

(1) Սոյն հայկաբան և Օրացոյց չինող Տէր-Երեմիա քահանային աշակերտուհիներէն էր իմ վաղամեծ մայրս՝ Տիկին Բըռլանդի Յ. Այվազեան, որոյ գեղեցիկ ոսկեզօծ և փոքրադիր Սաղմոսարան մը նուիրած էր Նորին Արժանապատուութիւնն, ի յաւերժական յիշատակ ուսանողութեան:

Սոյն թանկագին և ընտրելագոյն յիշատակն՝ մայրս գուրգուրանք կը պահէր, և առաւօտ և երեկոյ անոր մէջէն քաղուած կ'ընէր:

ճանչցուած էր, քիմիարանութեան հետեւելուն համար:

Ահա՛ այս քահանային՝ հակիրճ կենսագրութիւնը կը ներկայացնեմ աստանօր:

Քսանէչորս լեզու գիտցող քահանայ(1) ունեցած եմք, սակայն քսանէչորս արհեստներ գիտցող Հայ քահանային գոյութիւնն ո՞վ կը յիշէ:

Մեր մէջ գրեթէ աւանդութեան կարգըն անցած է թէ գործ չունեցողներն, արհեստին մէջ անյաջող եղողները քահանայ լինելու հետամուտ կը գտնուին, իսկ ճարտար արուեստագէտներն՝ ընդհանրապէս քահանայութենէն կը խուսափին: Սակայն Տէր-Երեմիա Երամեան՝ այդ վերջի դասակարգէն չէր: Տէր Երեմիա բնիկ Բիւթանիոյ վիճակէն էր, Պլուսապու առաջնորդութեանը տակ կէմլէյի գիւղերէն՝ Գարսաքի (2) մէջ ծնած 1805ին, և Մանուկ՝ անուամբ մը կրտուած:

Մանուկ՝ հնգետասանամեայ հասակին մէջ Արմաշու վանքը գացած, և միաբան գրութեամբ հայերէն, և իտալերէն կ'ուսանէր: Չարխաիան Ս. Աստուածածնայ տաճարին մէջ լուսարարութեան պաշտօն կը վարէ, և ապա վանքին դպրոցին մէջ վարժապետութեամբ կ'ընթացէ: 13 տարիներ յԱրմաշ մնալէ յետոյ մայրաքաղաքս կուգայ, և այն ատենի պատրիարքութեան քարտուղար և կոնգալիճի Անդրէաս վարդապետին ձեռամբ Լանկայի Ս. Լուսաւորչեան վարժարանին հայկաբան դասատու կը կարգուի: Քիչ յետոյ, ի Պալատ՝ Խորէնեան վարժարանը կը մտնէ մի և նոյն պաշտօնով:

(1) 30 տարիներ առաջ Երեմիայ հանդիսի մէջ կարգացած եմ թէ՛ ի Պուքրէշ ճանապարհորդող մը, չըմակայ գիւղերէն մէկուն մէջ պատահած է Սրբահամ նահապետի իւր տղան զոհելու ժամանակին տարիքն ունեցող գիւղացի քահանայի մը որ իրեն ցոյց տուեր է Հայր մերին քսանէչորս լեզուով թարգմանութիւնը: Ճանապարհորդը կը հետաքրքրուի և կ'ուզէ իմանալ հեղինակութեան բուն տէրը: Գիւղին քահանայն կը պատասխանէ և կը հաստատէ Քրանսերէն լեզուաւ թէ՛ նոյն ինքն է գրողն, Հայր, Ասորիի, Գիւտանիի, Սանաքրիդի, Արապի, Չէրքէզի, Բիւրտի, Աճէմի, Խըփտիի, Թուրքի, Ուլահի, հին Յունարէն, նոր Յունարէն, Ռուս, Լատիներէն, Մաճառերէն, Լեհերէն, Գերմաներէն, Գաղղիերէն, Իտալերէն, Անգղիերէն, Սլաւոնացւոց, Բօրգուկալի, Չինացւոց լեզուներով, մանաւանդ աւելի կը հիացնէ զուղեւորն՝ երբ արծաթ դրամ մը կը ցուցնէ անոր, վրան տէրունական աղօթքը յիշեալ լեզուներով գրուած կամ փորագրուած:

(2) Բիւթանական գիւղերուն մէջ ոչ միայն լաւ ող ունեցող գիւղերէն մին է Գարսաք, այլ պաղ և բաւական ազնիւ

Ապա Տիրացու-Մանուկ՝ Մայր-Եկեղեցւոյ Մայր վարժարանին մէջ խալիֆալուքեան (դպրոցական կառավարիչ ըսել է, որ միանգամայն երկրորդական դաստիարակչական կոչում է, ինչպէս նաև 1844ին կէտիկ-Փաշայի Ս. Յովհաննէսեան նախկին այրացաւեր վարժարանին մէջ ալ սոյն պաշտօնը կատարած է, երբ կապուտիկեան հանգ. Յովհաննէս եպիսկոպոս, յայնժամ Սարկաւազ-Մարտիրոս, անդ հայկաբանութեան, թուաբանութեան և գեղագրութեան դասերը կ'աւանդէր:

Տիրացու-Մանուկ սոյն վարժարանին մէջ օր մը չարածըճիկ տղուն մէկուն կռնակին քաթ(1) մը կը նետէ ուժգին, որ իսկոյն երկու կտոր կ'ըլլայ: Ասոր վրայ Տիրացու-Մանուկ հետեւեալ օրը պաշտօնանկ եղած է: Քիչ յետոյ ի Ֆէնէր թաղ՝ Ծասուճեան բնակարանին մէջ վարժապետութեան կը հրաւիրուի, յորմէ վերջը՝ Միսաք Ամիրայի տունը՝ Նորին պաշազատաց ուսուցչութիւնը կ'ստանձնէ:

Սակայն Տիրացու-Մանուկ Երամեան ընդհանուրին ծառայութեան նուիրուած մէկը լինելով, չը փափաքեցաւ երկար մընալ հարուստ մասնաւորաց և ամիրայական պաշազատաց քով կրթական պաշտօններով, այլ իւր կոչմանը համեմատ՝ ուզեց ընդհանուրին կրթութեանը ծառայել, ուստի նորէն կը վերադառնայ մայրաքաղաքիս մէջ իւր անդրանիկ պաշտօնավայրը եղող Ս. Լուսաւորչեան վարժարանը, ուր մեծ պատուով կ'ընդունուի ժամանակին խնամակալութենէն:

Սոյն պաշտօնավարութեան միջոցին Անդրէաս վարդապետի յատուկ պաշտպանութեամբ կ'ամուսնանայ և կը փեսա-

երեք տեսակ ջուր ունի, Քրիստոստուքի ջուր, կամըշլըք և Գօլջազ քիւմիսի: Սոյն գիւղը 120-125 տուն և դուռ ունի: Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը կայ՝ որ կառուցեալ և օծեալ է 56 տարիներ առաջ, Արմաշու միաբան Վանեցի Պետրոս վարդապետէն: Գիւղն՝ թաղականէ զատ, ծերակուտի ժողով ունի:

Երբ 300 տարուան գիւղ մ'է սա. ի սկզբան հիմնական գիւղին վրայ Էսկի Քէօյ ըսուած տեղը կը բնակին եղբր և դեռ հոն Քիլիսե-Երի կ'ըսեն՝ բարձր տեղի մը համար:

Այս հին գիւղին դէմը լեռան վրայ ձենովացիներէն մնացած Հիւսաք անունը դեռ պահող փլատակ պարիսպ մը կայ, և որուն ներքե քարայր մը կը գտնուի, յորում ի հին ժամանակաց մնացեալ խցերէն և հողեղէն ամաններէն՝ կարմիր գոյներով կոտորաուք կան, նաև շիշ, ծորակ, և աղիւսք կը գտնուին դեռ:

Գարսաքցիք ի կարս քաղաքէ եկած կը թուին, և կարսակ ըսելով իբրև պըզտիկ կարս մը շիներ են այդ գիւղը:

(1) Հարկ չկայ ըսելու թէ՛ հին ատեն քաթը գանահարութեան առձեռն գործի մ'էր:

յանայ Մայր-Եկեղեցւոյ Տէր Յարութիւնեան Տէր Մեսրոպ քահանային, որ արդէն մեծահոգեակալ էր 1826ին շինած և հրատարակած Հայերէն լեզուի քերականութեամբ:

Տիրացու-Մանուկ՝ ըստ որում անբասիր բարոյականի տէր անձ մը, և իւր ինքնաշխատ արուեստական ձեռնարկներով՝ քիչ շատ նիւթապէս ըստ բաւականին անկախ, 1848ին, Գատըգիւղի Ս. Թագաւոր եկեղեցւոյ մէջ՝ Մատթէոս Պատրիարքէն քահանայ կը ձեռնադրուի Տէր Երեմիա անուամբ, Ռումանիոյ Ծօքան քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյն համար:

Կերթայ իւր վիճակեալ տեղը, և անդ տարի մը պաշտօնավարելով ի Պօլիս կը վերադառնայ, և ի Պօյաճի գիւղ Երից Մանկանց եկեղեցին կը շրջուի քիչ ժամանակի համար. և յետոյ, Մայր Եկեղեցին հաստատուելով, կը քահանայագործէ մինչև ցլախճան իւր կենաց, 1882:

Հանգուցեալ Տէր-Երեմիա քահանայն թէև միշտ առջևը կը նայէր, բայց աշխարհ ամենայն կը տեսնէր:

Գիտէր նա ինքնօգնութեամբ՝ ոսկերչութիւն, ատաղձագործութիւն, տակառագործութիւն, դերձակութիւն, դարբնութիւն, փակեղաշինութիւն, (1) եկեղեցական պղեստի շինութիւն, վեղարաշինութիւն, սաղաւարդաշինութիւն, չաթալ-թագաշինութիւն, և ի մասնաւորի՝ նշխարքի կաղապարաշինութիւն, վեցհազարեայի գիտութիւն, ինչպէս նաև ուրիշ կարգ մը ձեռարուեստներ, բայց ամենէն աւելի քիմիագիտութեան կը հետեւէր, պղնձի մետաղն՝ ոսկւոյ վերածելու համար: Մայր եկեղեցւոյն սաղաւարտներն մեծ մասամբ իւր ձեռագործներն են:

Նորին Սրբութիւնը՝ նրբակերտ և

(1) Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Աթոռակալ հանգուցեալ Տ. Յովհաննէս յունագէտ քահանայն ալ եկեղեցականաց համար փակեղ և պատարագի զգեստ շինող էր, և փափկաճաշակ և նրբակերտ հայրապետական չաթալ-թագերն յօրինելու արուեստին մէջ մասնագիտութեան համբաւ կը վայելէր: Պրուսայու նորոգ հանգուցեալ երաժշտագետ Տէր Գասպար քահանայն ևս ոչ նուազ արուեստագէտ էր. 32 տարիներու մէջ 10.000 հոգիէն աւելի անձինք պատուաստած էր, և կ'ընթացէր նաև փակեղաշինութեամբ և կաղապարագործութեամբ:

Սոյն ձայնաւոր Տէր-Գասպար պատուական քահանայն ութ զաւակներ որք թողուց, երեքը՝ աղջիկ և հինգը՝ մանչ, յորոց Գրիգորիկը՝ ընտիր քեման կը չալէ, Յովհաննէսը՝ նկ կը զարնէ, Մադաթիկը՝ գանոն, հանգստե-Պիմէնը՝ տայրե (թեթ), իսկ Գառնիկը՝ դեռ ուսանող կատարեալ տիրացու մ'է:

գեղակերտ նշխարքի կաղապար շինող(1) էր. Մայր եկեղեցւոյ բոլոր քահանայից և մինչև ցարդ շատ քահանայներու քով գտնուած նշխարքի կաղապարներն՝ Տէր Նրեմիա քահանային փորագրած ու չինածներն են:

Սոյն քահանային կաղապարաշինութեան մասնագիտական համբաւը այնչափ տարածուած էր որ Վոսփորի գիւղերէն, մինչև գաւառաց քահանայք իրենց նշխարքի կաղապարաց շինութիւնն անոր կը յանձնարարէին:

Սոյն ձեռագործական յիշատակներէն զատ, Նրեմիան Տէր-Նրեմիա քահանայն գրական յիշատակ մ'ալ չինած ու թողած է ձեռագիր, «Հայերէն լեզուի ֆերականութիւն մը(2)»: Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— ԷԶՄԻՍԾՆԷՆ կը գրեն մեզ.

«Դուք ինձանից հարցնում էք թե ճշմարիտ է որ Պ. Միրաքեանին կոչեր են Գէորգեան ճեմարանը, Տեաչութեան կամ ուսուցչութեան պաշտօնի: Բարեկամ, ես զարմացայ Ձեր դրութեանը մէջ այդ կարգաւով. կ'երեւի դուք Պոլսեցիք մեզ վերայ ուղղում էք ծիծաղիլ: Ճշմարիտ է, մեր ճեմարանը շատ գէշ վիճակի մէջ է գտնուում, ամէն տեսակ դարձուածքներով լիքն է այժմ, այնպէս որ մեր Հայերի մէջ յայտնի Բրոֆէսէօրներից ոչ մինը չի ուղղում ճեմարանում պաշտօն ընդունիլ, բայց և այնպէս Տէրութեան օրէնքով պիտի ամէն ուսուցիչ վկայական ունենայ, այդ ձեր ասած Միրաքեանը՝ ինչպէս գիտենք՝ վկայական չունի, ուրեմն և չի կարող այս տեղ պաշտօն առնել: Բայց ի այդ, այստեղ ճեմարանում չեն գիտում անգամ թե Միրաքեան անունով մէկը

(1) Ճարտար կաղապար շինող է նաև Պրոսպար Առաջնորդ Գեր. Տ. Բարթուղիմէոս Սրբազան Արքեպիսկոպոսի ձեռնասուներէն՝ Արթ. Յ. Վրթանէս վարդապետ Բապուճեան, որ հեղարիքեկտ տիտղոսն առած է գնահատողաց կողմանէ: Նաև վրանակար (չառքըճի) է:

(2) Տէր-Նրեմիայի աղջիկն, Աղաւնի Խաժմիկեան, ազգային անդրանիկ դերասանուհին եղած է, և առաջին Հայկական թատերաբեմը եղած է առաջին անգամ 1857ին, Գատրաբի Մէօհլուտարի պարտիզին մէջ, ողբացեալ Արմենակ Հայկունեոյ վարչութեան ներքեւ:

կայ մանկավարժ: Ինչպէս մենք լսել ենք, Ալէքսանդրապօլէն Միրաքեան անունով մէկը գնացել էր Գերմանիա կաշեգործութիւն սովորելու...

— «Նոր-Դար»ի օգոստ. 4ի թուոյն մէջ կը կարդամք թէ, Թիֆլիսի թեմի առաջնորդ Գեր. Մամբրէ եպիս. Սա. Նասարեանց՝ երկարատեւ ծանր հիւանդութենէ յետոյ օգոստ. 1ի շաբաթ գիշերը վախճաներ է Թիֆլիզի մերձակայ Կոշոր ամարանոցի մէջ: Հանգ. Սրբազանի մարմինը Թիֆլիս բերուելով, օգոստ. 6ին վաղի աւագ եկեղեցւոյ գաւիթը թաղուեր է մեծ հանդիսիւ՝ նոյն թեմին նախկին առաջնորդաց, Գարբիէլ Ա. յվազեան և Սարգիս Հասան-Ջալալեան եպիսկոպոսաց քով:

Մամբրէ եպիսկ. ծնած էր 1843ին ի վաղարշապատ և Ս. Էջմիածնայ Ժառանգաւորաց դպրոցին մէջ իւր ուսումն առնելէ յետոյ, եկեղեցական կոչումն ընդունած էր: Ա. ի և այլ տեղեր վանահայրութեան և փոխառաջնորդութեան զանազան պաշտօններ, երկար ժամանակ ալ Թիֆլիսի Կոնսիստորիայի նախնադամի պաշտօնը վարած էր: 1884ին Էջմիածնայ Սինոդին անգամ կարգեցաւ և 1888ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Ապա, Վրաստանի և Խմէրէթի կարեւոր թեմին առաջնորդ նշանակուեցաւ, և այս պաշտօնը խիստ յաջողակութեամբ և օգտակարապէս վարելով՝ իւր հօտին սիրելի եղաւ, մինչ իւր նախորդն Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոս ատելի էղած էր ամբողջ ժողովրդեան:

— Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տրդատ վարդապետ Պալեան չորեքշաբթի օր հրաժարական մատուցեց խառն ժողովոյ, յառաջ բերելով այն հակառակութիւններն որք իրեն դէմ յարուցուած էին: Ժողովը նկատելով որ մասնաւոր քննութիւններէն ստուգուած է արդէն որ հիմն չունին Առաջնորդին դէմ տեղի ունեցած դժգոհութիւնը և արդիւնք են անձնական կրից, և նկատելով միանգամայն որ Գեր. Տրդատ վարդապետի պաշտօնավարութիւնը օգտակար եղած է վիճակին, անընդունելի դատեց հրաժարականն և որոշեց հարկ եղած աջակցութիւնն ընծայել՝ դիւրացնելու համար իւր պաշտօնավարութիւնը: Սոյն որոշում յատենի ժողովոյ

հաղորդուելով Առաջնորդին, որ ներկայացած էր, թէ և Ն. Գերապատուութիւն պնդեց իւր հրաժարականին վրայ, սակայն խառն ժողովն ամփոփոխ պահեց իւր որոշումն և Գեր. Առաջնորդը համակերպելով վարչական տնօրինութեան, ստանձնեց իւր պաշտօնը:

— Յաւելով կը ծանուցանեմք թէ, մեր երիցագոյն պաշտօնակիցներէն Մեծ. փանոսեան կարապետ էֆէնտի, Տէր և Խմբագիր Մանգոմէ-Էֆրէայր լրագրոյ, ամիսէ մը ի վեր անկողնոյ կը ծառայէ՝ ձախ կողմէն թեթեւ իմն կաթուածահարեալ: Թէ և ի սկզբան իւր վիճակը մտահոգութիւն պատճառած էր, սակայն ուրախ եմք յայտնելու որ հետզհետէ լաւանալով, վտանգն անցուցած է այժմ, կը մաղթեմք որ շուտով բոլորովին առողջանայ փանոսեան էֆէնտի և անցնի իւր գործին գլուխը: Մանգոմէ, իւր Խմբագրապետին պատահած այս դժբաղդութեան պատճառաւ, այժմ շաբաթ միայն երկու անգամ կը հըրատարակուի, չորեքշաբթի և շաբաթ օրերը, փանոսեան էֆէնտիի ժամանակի մը համար իսպառ արգիլուած լինելով կարգաւ ու գրելը, Շատ ցաւալի է որ Հայ օրաթերթերէն և ոչ մին իրենց պաշտօնակցին պատահած դժբաղդութիւնը ծանոց Հայ ժողովրդեան, մինչեւ մայրաքաղաքիս օտարալեզու գրեթէ բոլոր կարեւոր լրագրքը ցաւելով և առ փանոսեան էֆէնտի համակրական արտայայտութեամբ ծանուցին սոյն դժբաղդէպը:

— Պէրպէրեան վարժարանի չրջանաւարտներէն Պ. Գալուստ փափազեան, թոռն Օրթագիւղի հանգուցեալ աւագերէց Տէր Գալուստի, Աղգային կեդր. վարչութեան Ուսումն. Խորհուրդէն վկայեալ ուսուցիչ, ընդունելով Հռոմէական դաւանանքը, գնացեր է Զմարայի հռոմէական վանք: Հաւանականաբար կրօնաւոր լինելու դիտաւորութեամբ:

— Խաբէրդի Հռոմէական Հայոց առաջնորդ Գեր. Աւետիս եպիսկ. Արքիարեան, աշակերտ Բրօքական տալի և հրեքայր վենետիկի ստաներէն Պ. Արքիար Արքիարեանի, Հռոմէն կարեւոր գումար մը ստացեր է՝ վարժարան մը հաստատելու համար:

— Պրուսայու Առաջնորդ Գեր. Տ. Բարթոլոմէոս Սրբազան Արքեպիսկոպոս, որ իբր ամիս ու կէսէ ի վեր հիւանդ էր, բոլորովին առողջացած է և այսօր առաջին անգամը լինելով դուրս կ'ենէ՝ Ղալթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին ուխտի երթալու համար:

— Պաղտատի նորընտիր Պատրիարքական փոխանորդ Գեր. Արիստակէս եպիս. Դերձակեան, ըստ որոշման խառն ժողովոյ, իւր վիճակն ուղեւորելու առթիւ Տիգրանակերտ պիտի հանդալի՝ տեղւոյն ժողովոյ և առաջնորդի ընտրութիւնները կատարել տալու համար:

— Քղիի վիճակին փոխ-առաջնորդ կարգեցաւ Գեր. Բարթոլոմէոս վարդապետ Պաղճեան:

— Խառն ժողովն հաստատեց կարնոյ Գաղ. Ժողովոյ նորոգ ընտրութիւնը, մերժելով ժողովականներէն Պալարեան Մկրտիչ էֆ.ի հրաժարականը:

— Ուսումն. Խորհուրդը կը մտածէ Մանկավարժական թերթ մը հրատարակել իւր իրաւասութեան ներքէ:

— Երուսաղէմոյ Ժառանգաւորաց դպրոցին աստուածաբանութեան ուսուցիչ Պ. Թորոս Տ. Խաւհակ Զուղայեցի՝ կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանին Տեսուչ և Հայերէն լեզուի ու գրականութեան ուսուցիչ կարգուեց Տ. Պ. Զուղայեցի ի մօտոյ պիտի մեկնի Երուսաղէմէն:

— Շապին Գարահիսարի առաջնորդ Կիւրոյեան Գեր. Տ. Խորէն վարդապետի դէմ գանգատագրեր եկեր են ի Պատրիարքարան: Խորէն վարդապետ ժամանակէ մը ի վեր առանձնացած է եղեր Թամզարայի Ս. Գէորգ վանքին մէջ:

— Աղէքսանդրիոյ ազգայնոց կողմանէ Թաղական Խորհրդոյ անդամ ընտրուեցին Պօղոս փաշա Նուպարեան՝ Ատենապետ, Պօղոս պէյ Աշքեան, Անտօն Արթինօֆ, Գաբրիէլ Սեդրոսեան, Կարապետ պէյ Բէյիգեան, Հայկ Էքիզէր, Յակոբ Ազնաւորեան և Յովհաննէս Զիգեանօֆ:

— Կը խորհուրդ վերաջինել Գաղտ գիւղի Ս. Թադաւոր եկեղեցին, աւելի ընդարձակ: Այժմու եկեղեցին խիստ նեղ կուգայ գիւղին յարաճուն բազմութեան:

— Ռոտոսթոյի Ս. Թադաւոր ե.

կեղեցւոյ ուխտաւորաց թիւն այս տարի 1000ի հասեր է. ասոնք մեծաւ մասամբ եկեր են Ադրիանուպօլսոյ, Ֆիլիպէի, Պրուսայի, Նիկոմիդիոյ, Բտաբազարի, Պանտրմայի և Պալքէսի, Զմիւռնիոյ և Պերկամայի վիճակներէն, ինչպէս և Մալկարայէն, Զօրումէն և Սիլիվրիէն: Պօլսեցի հաղիւ մէկ կամ երկու ընտանիք երեւցեր են:

— Ազգ. Պատրիարքարանի և Յունաց Պատրիարքարանին միջև բանակցութիւնք կը կատարուին՝ Յոյն եկեղեցիէն Հայոց եկեղեցին և Հայոց եկեղեցիէն Յունաց եկեղեցին յարողներու նկատմամբ կատարելի գործողութեանց համար:

— Բնիկ Տրապիզոնցի օրիորդ մը, վարդուհի Յակոբեան, Թիֆլիսի Հայ վարժարանէ մը չըջանաւարտ ելնելէ յետոյ, Զուիցերիա գացեր, և Յունիսի, Ժընէվի և Գերմանիոյ Լայպցիկ քաղաքի համալսարանաց մէջ մանկավարժութիւնը, գրականութիւնը, պատմութիւնը և հոգեբանութիւնը իւր ուսումնասիրութեանց առարկայ ընելէ և հմտութիւն համբարելէ ետք, գրաւոր աշխատութիւն մը ներկայացուցեր է Պերն քաղաքի համալսարանի փիլիսոփայական ճիւղին, ուր քննութիւն ևս անցունելով՝ ստացեր է փիլիսոփայութեան տոքթորի վկայական: Օր. Յակոբեան հիմնովին ուսած է եղեր նաև գերմաներէն և ֆրանսերէն լեզուները, ինչպէս և հայերէն:

— Դատաստանական Խորհրդոյ անդամներէն հրաժարեալ Նազարէթ էֆ. Խաչերեանի տեղ ընտրուեցաւ Գրիգոր էֆ. Մսերեան:

— Մոսկուայի Լազարեան ճեմարանի Տեսուչ Պ. Գէորգ Քանանեան, Պոլիս եկած լինելով, երէկ իւր տիկնոջ հետ Պրուսա ուղեւորեցաւ:

— Տիգրանակերտի վիճակին առաջնորդական ընտրելի ներկայացուած են Գեր. Գրիգորիս արքեպիսկոպոս Յովհաննէսեան, Արժ. Մովսէս վարդ. Կէօմրիկճեան և Արժ. Վահան վարդ. Յակոբեան:

— Մշոյ Ս. Կարապետի վանուց ուխտագնացութիւնն ամենայն անդորրութեամբ տեղի ունեցեր է այս տարի: Տեղւոյն կառավարական պաշտօնեայք բարեկարգութեան վրայ հակեր են:

— Սելանիկի Հոգեւոր Հովիւ կարգուեցաւ Արժ. Արսէն քահանայ Անդրէասեան: Տեղւոյն նախորդ Հոգեւոր Հովիւ Արժ. Արսէն Աւագ քահանայ Խաչոյեան և Պրուսայի Տ. Գաբրիէլ քահանայն հոգեւոր պաշտօնեայ կարգուեցան Աղէքսանդրիոյ եկեղեցւոյն:

— Եդեսիոյ և մօտակայ կարմունջ գիւղի բողոքական Հայերէն կարեւոր մաս մը դարձեր է ի ծոց Մայրենի եկեղեցւոյ:

— Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն որոշեց վերաջինել Հիւանդանոցի մնացեալ մասերն, այսինքն եկեղեցին, Հիւրանոցը և արանց Յիմարանոցը: Առ այժմ պիտի շինուին Բաղնիք մը ու ճերմակեղինաց Լուացարան մը:

— Թիֆլիզի Հրատարակչական Ընկերութիւնն հրատարակեր է Յակոբ Պարոնեանի «Հոսհոսի Զեռատեորը», «Պոռոյտ մը Պոլսոյ Թաղերուն մէջ» և «Թիկարի դուշակութիւնը» գրուածները, մէկ հատորի մէջ ամփոփուած:

— Ռոտոսթօ ևս յրէժայէնեան դըրութեամբ Ծաղկոց մը պիտի ունենայ յառաջիկայ սեպտեմբեր լին: Ուսուցչուհի կարգուած է Օր. Աղաւնի Պէրպէրեան:

— Տրապիզոնի նորընտիր առաջնորդին պաշտօնը վաւերացնող կայս. Պէրաթն Պատրիարքարան ղրկուած լինելով, իրեն յանձնուեցաւ ի մօտոյ պիտի մեկնի յիւր պաշտօնատեղին:

— Խառն ժողովը հաստատեց Տ. Գէորգ վարդ. Երէցեանի պաշտօնն իբր Հոգեւոր Հովիւ Ռումանիոյ և Պուլիարիոյ Հայոց և որոշեց Երուսաղէմոյ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հաւանութիւնը խնդրել այս մասին:

— Բեդրսպուրկէն կը գուժեն մահըն բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանի (Գամառ Գաթիպա):

— Ի Շամախ գօլերայէ վախճանեալ երիտասարդ Սմբատ Բէգ Լալայեանցի եղբայր Պօղոս Բէգ Լալայեանց՝ իւր վաղամեռ եղբոր յիշատակին համար՝ նորա սիրած Հայոց Թատրոնական գործին իբրև գրամագըլուէս նուիրեր է 5000 ռուբլի:

— Կիլիկիոյ Ամեն. Ս. Կաթողիկոսը կարգադուրկ ըրեր է Մալթիոյ Առաջնորդ Խաւհակ եպիսկոպոսը, որ այս որոշման դէմ բողոքած և խնդ.

րած է որ Աղգ. կեդր. վարչութեան կրօնական ժողովոյ կողմանէ քննութիւն կադարուի :

— Զմիւռնիոյ Առաջնորդ Գեր. Տ. Ներսէս վրդ. պ. Ասլանեան չորեքշաբթի օր իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ :

— Ատարազարէն կը գրեն մեզ .

Յուլիս 26ի կիրակէ գիշեր հոն. դիտաւոր չքով տեղի ունեցաւ քաղաքիս թաղապետական բժիշկ Տօթէօր Անդրանիկ էֆ. Թէրզեանի պսակադրութիւնն ընդ Օր. իմաստունի Պ. Ճէզվէճեանի, դուստր հանգուցեալ տպարանապետ Պետրոս Ճէզվէճեանի, Հանդիսին նախագահեր է Արթ. Տ. Մկրտիչ վ. Աղաւունի : Նորապսակ Տօթէօրը՝ որ ամէնուն համակրութիւնը գրաւած է քաղաքիս մէջ, չորեքշաբթի գիշեր պաշտօնական անձանց 40 հոգւոյ հաջկերոյթ մը տրուեցին :

— Գրավածաւ վահան էֆ. Զարդարեան ձեռնարկած է թերթ առ թերթ հրատարակել ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ անուն գիրք մը որ պիտի պարունակէ Հայ երեւելեաց ինքնագիր շարադրութիւններէն մէկ մէկ հատուած, ճիշդ ընագիրներու ձեւական օրինակաւ, հանգերձ կենսագրական ծանօթութեամբք և լրօսանկարօք :

— Մեզ կը գրեն .

« Աղգային երկու բանասէրներ, Մեծ. Միքայէլ էֆ. Ս. կաղնարարեան և Բարսեղ էֆ. Ե. Լքսէրճեան, միանալով հայկական մատենադարանը կ'ուզեն գեղեցիկ գործքով մը ևս օժտել :

« Սոյն գրական գործը իւր տեսակին մէջ եղական երեւոյթ մը ունի և Հայ մատենագրութիւն տարիներէ ի վեր չէ դարձնած սոյնպիսի գրական հրաշակերտ մը : Ապաքէն քաջալերութեան արժանի են մեծարոյ ձեռնարկող բանասէրներ » :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Յունաստանի երրկիս թագաւորը հիմա Ֆրանսա է որ Էքս-լէ-Պէնի ջերմուկները մտած է . Փարիզ երթալէ յետոյ վիէննայի ճամբով իւր մայրաքաղաքը պիտի դառնայ :

— Անգղիական գործեր. — Անգղիական երեսփոխանական ընդհանուր ընտրութիւնք վերջապէս աւարտելով, կը-

լատսթոնեան կուսակցութիւնը 42 աթոռի զուտ մեծամասնութիւն մ'ունեցաւ որ այնչափ զօրաւոր դիրք մը ըսել չէր Պ. Կլատսթոնի համար, քանի որ Լորտ Սալիզուրի 68 աթոռի մեծամասնութեամբ յիշխանութիւն անցած էր : Ասոր համար Լորտ Սալիզուրի որոշեց անվտանգութեան քուէն տրուելէն յետոյ միայն ասպարէզէն քաշուիլ : Այսպէս օգոստ. 4ին (Ն. Տ.) Թագուհւոյն գահաձառովը որ շատ կարճ էր և քաղաքական մասնաւոր նշանակութիւն մը չէր պարունակեր, Երեսփ. ժողովոյն նստաչափը բացուեցաւ : Ժողովոյն օգոստոս 8, 9 և 11ի նիստերուն մէջ երեսփոխանք Թագուհւոյն մատուցանելի ուղերձին վիճարանութեամբ զբաղեցան և վերջապէս անվտանգութեան քուէ տրուեցաւ Լորտ Սալիզուրիի, որ օգոստ. 12ին իշխանութենէ հրաժարելով, Պ. Կլատսթոնի յանձնուեցաւ նոր Խորհրդարանը կազմել :

Պ. Կլատսթոնի նոր Խորհրդարանը կազմուած է այսպէս .

Պ. Կլատսթոն՝ նախարարապետ, Ա. Լորտ Գանձարանի և Լորտ Կնքապահ :

Լորտ Հերչէլ՝ Լորտերու ժողովոյն նախագահ և դատական նոտարար :

Լորտ Քլեմընթի՝ Հնդկաստանի նախարար և նախագահ Պետական Խորհրդի :

Լորտ Ռոզպէրի՝ Արտաքին գործոց նախարար :

Լորտ Ռիբլըն՝ Գաղթականութեանց :

Պ. Ասքիթ՝ Ներքին գործոց .

Պ. Քամպէլ Պանըրմէն՝ պատերազմական :

Լորտ Սթենսէր՝ Մովային :

Սըր Ռիլեմ՝ Հարքըրթ՝ Ելեւոից :

Պ. Ջօն Մօրլի՝ նախարար Իրանտայի :

Սըր Ջօրձ Թրիվիլլըն՝ նախ. Սկովտիոյ :

Պ. Մընտէլլա՝ Առեւտրական :

Պ. Հէնրի Ֆուլըր՝ տեղական և գաւառական կառավարութեան նախագահ :

Պ. Արնօլտ Մօրլի՝ Թղթատարութեան և հեռագրատանց :

Պ. Աքլանտ՝ կրթական :

Պ. Պրայս՝ Լանքաշիրի գլխութեան :

Պ. Շով Լըֆէվր՝ հանրօգուտ շինութեանց :

Լորտ Հուլթըն՝ Իրլանտայի փոխարքայ, Լէ, Լէ :

Հրաժարող նախարարութիւնը բաւական ծանր խնդիրներ կը կտակէ իւր յաջորդին . նախ և առաջ Մարոքի խնդիրը որ դեռ այնպէս առկա չէր մնայ : Մարոքի վեհապետը քանի մ'անգամ բանակցութիւններ սկսաւ Անգղիոյ դեսպանին հետ ու խզեց . անշուշտ Ֆրանսայի մատն ակներկ է այս խնդրոյն մէջ : Միւս կողմէն Աֆղանստանի էմիրն որ նախա-

պէս կը յոխորտար Անգղիոյ քթին, հիմա դեռ եւս ապստամբող ցեղերէն և Ռուսիոյ արշաւանքներէն ու ոտնձգութիւններէն խիստ նեղը մնալով, Անգղիոյ գիրկը կը դիմէ որ ամէն կերպիւ պիտի օգնէ անոր : Իսկ Ռուսիա հանդարտիկ Բամիրի հովիտը գրաւել կը ջանայ :

— Ռուսիոյ Ելեւոից նախարար անուաներ է Պ. Վիթթէ, և հաղորդակցութեանց նախարար՝ Պ. Սիկմէր Քրիվօյալմ :

— Հնդկաստանի անգղ. կառավարութիւնը որոշեր է իւր Ա. բանակը զինուց ներքեւ առնուլ Աֆղանստանի դէպքերուն առթիւ պատրաստ գտնուելու համար : Գնդապետ Լօքարթ 4000 զօրքով սահմանագլխոյն վրայ գտնուող Սե Լեւրան բնակչաց վրայ կը քալէ՝ վերջին դէպքերուն սկզբնապատճառ Հաշիմ Ալի ցեղապետը ձեռք անցնելու համար :

— Մարոքի մէջ ցեղերու ապստամբութիւնը կը շարունակուի :

— Ռուսք Պէհրիկայի ծովուն մէջ անգղիական դրօշով ծովահորթ որսացող Գանատացիներ բռներ են, առարկելով թէ հոն որսալու իրաւունք չունին : Գանատացիք գոհացում կը պահանջեն :

— Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Պ. Կիրս Ֆրանսա գնաց, դարձեալ օդափոխութեան համար, և Պէրլինէ անցին Պ. Քարրիվիի հետ չը տեսնուեցաւ, այլ Էքս-լէ-Պէնի (Ֆրանսա) մէջ Պ. Քառնոյի և Պ. Ռիպոյի հետ երկար տեսակցութիւններ ունեցաւ :

— Պ. Կլատսթոն իւր Հարգէնի դղեկին մէջ նոխազէ մը յարձակում մը կրելով, թեթեւակի վիրաւորեցաւ :

— Ճեմովայի մէջ ի պատիւ Ամերիկայի գիւտին ցուցահանդէս մը բացուած է հիմա, ուր պիտի այցելէ նաև Ռամպէրթօ Թագաւորը զոր ողջունելու համար Ֆրանսական նաւատորմ մ'ալ պիտի երթայ հոն :

— Աւստրալիոյ անգղ. գաղթականութեան Թաունսվիլ քաղաքին իշխանութիւնք Ռուսի մը թուղթերն ու գոյքերը գրաւեր են, կասկածելով թէ տեղւոյն ամրութեանց լրօսանկարները կը հանէ :

— Զուիցցերիոյ Պէրն քաղաքին մէջ անցեալ շաբթու Խաղաղասիրաց Համաժողով մը գումարեցաւ . այս շաբթու ալ Խաղաղասիրաց Խորհրդարանական Համաժողով մը կը գումարի անգ :

— Սեւաստաբոլ մինչև 1895 առեւտրական նաւահանգիստ պիտի մնայ, և անկէջ յետոյ միմիայն զինուորական նաւահանգստի պիտի փոխուի :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբաշխութիւնք. — Մէհմէտ Էմին էֆ. Սարայքէօյի (Այտըն), Նէշէթ էֆ. Եապանապատի (Գաղատիա), Աթըֆ պէյ. Բէսքէնի, Բասիս էֆ. Սեւերեկի (Տիգրանակերտ) և Մուսթաֆա Սաֆվէթի էֆ. Ճէզիրէի քայմաքամ, Խալիլ Հաշմէթ էֆ. Երպաայի (Սեբաստիա) նախ, Էնիս փաշա՝ Մարտինի և Հասիպ փաշա՝ Մշոյ կառավարիչ, Սապրի էֆ.՝ Կարնոյ Առևտրական դատարանին նախագահ անուանեցան :

Աստիճանք. — Աբիկ էֆ. Ունճեանի՝ Պալա, Օսմ. Պանքային Տրապիզոնի ճիւղին տնօրէն Անթուան էֆ.ի՝ Իւլա Ա., Արտաքին գործոց նախարարութեան իրաւագէտ խորհրդականի օգնական Յովհաննէս պէյ. Գուլումճեանի՝ Իւլա Բ., Յունաց Պատրիարքարանի թուրքերէնի Ա. քարտուղար Եանքօ Հուլուրօ էֆ.ի՝ Սանիյէ Միւթէմայիզ, Երզնկայի ընդհ. դատախազի օգնական Մէհմէտ Բէմզի էֆ.ի՝ Սանիյէ Բ., Բեթղէհեմի միւտիր Մուսթաֆա Էշրէֆ էֆ. և Պրուսայի Պանդիտոց Հիւանդանոցին գեղադործ Անտօն էֆ.ի. Բապիա, Մարտինի կառավարիչ Էնիս փաշայի Բումէլի Պէյլէրպէյի աստիճանները տրուեցան :

Պատուանգումք. — Թէնպէթի Ընկերութեան տնօրէն Պ. Զօկէպի՝ Ա. Մէհմէտիյէ, Պրուսայի պահեստի զօրաց հրամանատար Մէհմէտ Նայրի փաշայի՝ Բ. Օսմանիյէ, Ամասիոյ Յունաց Մետրապօլիտ Տ. Անթիմիոսի՝ Բ. Մէհմէտիյէ, Տիգրանակերտի Իտարէի ժողովոյ անդամ Յովհաննէս էֆ.ի՝ Գ. Օսմանիյէ, Ատաբազարի քայմաքամ Մէհմէտ Նիւզէթ պէյի՝ Ե. Մէհմէտիյէ, Քօնեայի ոստիկան-գլխավորաց հրամանատար Հիւսէյին փաշայի՝ Բ. Մէհմէտիյէ պատուանշանները տրուեցան :

— Լիբանանու կառավարիչը մեռնելով իրեն յաջորդ կարգուեցաւ Նաում էֆ. որ այս առթիւ վէջիրութեան աստիճանի բարձրացաւ : Նաում բաշա այս շարքու Լիբանան ժամանեց է :

— Մեծ-Եպարքոսի բազմադիմի ծառայութեանց իբր գնահատում, Վեհ. Սուլթանն իրեն նուիրեց է Գարասիի մէջ գտնուած ոսկերորակի հանք մը :

— Մեծ-կղզւոյ փողոցները կազմվելու սաւորելու մենաշնորհ խնդրուած է :

— Գօնեայի Իւրքիւ պաշտօնակին բանտին մէջ դեռ չը դատուած բազմաթիւ բանտարկեալք կան եղեր :

— Զիքալոյի արուեստահանդէսը զորկուելիք նիւթերը մաքսատուրքէ ազատ են :

— Կարնոյ ամրութիւնները բարեկարգելու համար Քրուրի գինադործա-

րանէն երկու վարպետներ պիտի ղրկուին :

— Զամլըճայի բարձանց վրայ հոյակապ պանդոկ մը շինելու համար երկու եւրոպացիներ արտօնութիւն կը խնդրեն :

— Սեյանիկի Բէթի տեղակալ-հաշուակալ Պ. Վաֆօրուլօ լեռը տարուեր է :

— Սամսօն-Զարլամպա շոգեշարժ թրամուէյի մը շինութեան արտօնութիւն տրուեցաւ Աթանաս էֆ. Թէլլէզօղլուի :

— Հնուախոս — Հնտախոսը «Մաղիկ»ի դադարումէն ի վեր գգալի յառաջխաղացութիւն ըրաւ : Պարսկաստանի մէջ ուր ատեն մը անհետանալու վիճակին հասած էր, դարձեալ սկսաւ Թէհրանի, Դաւրէթի և Շիրազի կողմերն, այս անգամ ամենայն սաստկութեամբ : Ռուսիոյ մէջ ամէն կողմ տարածուած է և զոհերն ալ հազարներով կը համրուին : Հնտախոսը Ռուսիայէն Գերմանիա, Ֆրանսա և Անգլիա իսկ անցաւ : Պէրլինի մէջ քանի մը դէպքեր ու մահեր տեղի ունենալէն յետոյ, քանի մ'օրէ ի վեր և ոչ մէկ դէպք լսուած է : Համպուրկի, Ալթօնայի և այլ շրջակայ քաղաքաց մէջ զոհերն տասնեակներով և երբեմն իսկ հարիւրներով կը հաշուին : Ֆրանսայի մէջ, ի Փարիզ, Հափր, և այլն, բաւական թուով զոհեր կը տանի : Եւրոպիոյ չհարաւարակեան ծայրէն մինչև հիւսիս-արևմտեան ծագն անցնելով, միայն մեր լայնածաւալ պետութեան մէջ չ'է կրցած մուտ գործել չնորհիւ Վեհ. Սուլթանի գուրգուրագին և քաջարթուն հոգածութեան : Հնտախոսին Եւրոպայի մէջ տարածուելուն առթիւ թէ՛ ծովէն և թէ՛ ցամաքէն նոր նոր քարանթիններ հաստատուեցան : Արեւելեան ձեպընթաց կառախուսքով Թուրքիա մտնող Եւրոպացի ճամբորդք, Արիանապոլսոյ գծով եկողները Մուսթաֆա-Փաշայի մէջ և Սելանիկի գծով եկողները Զիպէֆլէի մէջ երկօրեայ քարանթինա պիտի սպասեն : Այս մասին հարկ եղած միջոցները ձեռք առնուած են և ընդ հուպ մաքրանոցներ կը կառուցուին այդ երկու վայրերուն մէջ : Միջերկրականի Եւրոպական ծովեզերքէն եկող նաւերը հինգօրեայ քարանթինայի պիտի ենթարկին : Տասնօրեայ քարանթինա սահմանուած է նաև Եւրոպիոյ Հիւսիսային ծովեզերքէն և Անգլիայէն եկող նաւերուն համար : Ի Կովկաս, Հնտախոսն սկսեր է անհետիլ :

— Ալաշկերի մէջ ձերբակալուեր է Զէյպէք օղլու Իպրահիմ անուն աւազակը :

— Եւթէնի մէջ Օսմ. զինուորք նոր յաղթութիւններ ունեցեր են :

— Ատաբազարի նորակառոյց բարձրագոյն նախարարարանին բացումը կատարուեր է Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին օրը :

— Օսմանեան ծովեզերաց հսկողութեան համար 24 մեծ ու փոքր մարտանաւեր պատրաստուիլ սկսուած է :

— Քեսքիմի (Կարին) մէջ պաճարախտ երեւան ելած է, որուն օրական տասնեակ անասուններ զոհ կ'երթան :

— Մանրուք դրամ (1 և 2 դրուչնոց) 100.000 ոսկւոյ նոր դրամ կտրելու խորհուրդ կայ :

— Ագիլիէ գաւառակին (Սեբաստիա) մէջ ասպատակող Քէօր Սիւօ և մէկ ընկերը ձերբակալուած են : Միւսները կը փնտռուին :

— Մեհմապ անուամբ գրական ու քաղաքական նոր օրաթերթ մը հրատարակելու արտօնութիւն խնդրուած է, հասոյթը Համազգային Անկեղանոցին յատկացուելու պայմանաւ :

— Անուրդի դրուած գրքերուն մէջէն արգիլեալները վար պիտի դրուին այսուհետեւ :

— Սեբաստիոյ մէջ Օգոստոս 6 ինկախաղան հանուեր է Զօրաք Ալի անուն աւազակը որ Եւրոպիոյ կողմերը կ'ասպատակէր :

— Բերայի աղեխարժ արկածք. — Անցեալ ուրբաթ օր երեկոյեան ի Բէրա թէփէ պաշտի Թաղապետական պարտիզին դէմը կառուցուելու վրայ եղած 6 յարկ և 24 մէթր բարձրութեամբ մեծ տուն մը յանկարծ փլաւ և բաւական թուով գործաւորներ փլատակաց ներքև մնացին : Միայն 6 գործաւոր շէնքին յառաջակողմէն և 7ն ալ յետնակողմէն փախչելով, գործաւոր մ'ալ չ'էնքին երրորդ յարկէն ինքզինքը փողոց նետելով ազատած են : Մինչև այսօր շէնքին տակէն 7 մեռեալներ հանուած են : 11 վիրաւորեալք Վեհ. Սուլթանին հրամանաւ Երլորդի հիւանդանոցին մէջ կը դարմանուին մասնաւոր բժշկաց ձեռամբ : Շէնքը կը պատկանի եղեր 2 հրեայներու՝ Ավրամ Ասլան օղլու Ֆիւսքօ և Իսաք Բինթօ : Շինութիւնն իրենց վրայ առած էին Պ. Մ. Մարտիկօրութօ և Թէտէսքի, որք իրենց կողմէն գործը ձերանջնքօ և Եօրկի Քրիքէլի եղբարց յանձնած էին : Եօրկի փլատակաց տակը մնալով մեռած և իւր վրայէն 3000 ոսկւոյ պանքնօթ գտնուած է :

Այս ձեռնարկուք ամէնքն ալ ձերբակալուած և երաշխաւորութեամբ ազատ արձակուած են : Իրենց հարցաքննութեան թուղթերը Արդարութեան գործոց նախարարութեան յանձնուած են և դատն ալ ընդ հուպ պիտի տեսնուի :

Վեհ. Սուլթանն արկածեալ գործաւորաց դրամակաւ պարգեւներ ըրած է : Շէնքը ամբողջովին վար առնուեցաւ :

Ա Ր Ժ Է Գ Դ Ր Ա Մ Ո Ց			
Սամ. լիւրան 100 զըշէն			
Մէհմէտիյէ	107 30	Վեցնոց	101 20
Քառորդ մէհմէտ	105 30	Ռուսիոյ բօլ	89 25
Մանր մէհմէտ	101	Նաբոլէոն	87 27
Մէթալիք	97	Պրիմի	51 15
Հինգնոց	100	Անգլ. լիւր	110 12
Մանթ թղթադրամ 9 3			
Դօնաօլիտ	23 26	Ռում. երկ.	86 5/8
Թահվիլ Օսմ.	84 33	Թապիկէ	18

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1009

... Խմբագիր

Պատուական թերթիդ 30րդ թուոյն մէջ «Կրօնական հարցումներ» վերնագրոյն ներքեւ «Հետաքրքիր Աստուածանշանք» Խմբագրութեանդ գրած նամակն և առաջարկած կրօնական հարցերը կարդալով, տեղեկացայ որ յիշեալ բարեպաշտ եղբայրն Նոր Դարի 59րդ համարին մէջ «Ծաղիկ» էն արտատպեալ մեր գրած մէկ կրօնական հարցի պատասխանն ընթերցելով, ինքն ես հետաքրքրուած ու թելադրուած է իւր կողմէն կարգ մը հարցեր առաջարկել, թէ և այդ հարցերէն ոմանք այնքան պարզ բաներ են, որոց պատասխանելն իսկ թերեւս ծիծաղելի երեւի բազմաց, սակայն ըստ իւր այն բարեմիտ ու բանաւոր կարծեաց թէ՛ իւր հարցեր «ամէն մի Հայ քրիստոնէի համար հարկաւոր են», և դարձեալ, իւր կրօնասիրական ջերմ հետաքրքրութեան ու բաղձանացը բաւականութիւն ու գոհացումն տալու համար՝ ամենայն յօժարութեամբ մէն մի հարցի համառօտ բացատրութիւնը տալու ջանադիր կը լինիմ իմովսանն:

Բացատրական պատասխաններէն առաջ, իւրաքանչիւր հարց կարգաւ կը դնեմ:

1. — Ի՞նչ է ուրարը և ինչո՞ւ է անպատճառ ձախ ուսի վրայ:

Ուրարն, նաև փորուրարը, Քրիստոսի քաղցր լծոյն օրինակն ունի. սարկաւազը ուսին վրայ ձգելով ուրարը՝ կը նշանակէ որ մասամբ միայն մտած է ընդ լծով Քրիստոսի, ըստ որում՝ չէ տակաւին քահանայ, կամ կատարեալ եկեղեցականութեան աստիճանին մէջ. իսկ թէ ինչո՞ւ ձախ ուսին վերայ միայն կը կրէ, ատոր ալ պատճառը յարմարութեան պահանջունն է և ոչ այլ ինչ: որովհետեւ դիւրին է մտածել թէ՛ քանի որ սարկաւազը ստէպ բուռվար ընելու պարտաւորութիւն ունի, եթէ ուրարը աջ ուսն ունենար՝ թէ՛ յաճախ պիտի սահէր իյնար և թէ՛ ուրիշ անպատեհութիւնք ևս տեղի պիտի ունենային:

2. — Փորուրարը:

Առաջին հարցի պատասխանէն հասկըցունեցաւ արդէն նշանակութիւնը, և քահանայն զայն վիզը անցնելով՝ կ'իմացուի թէ՛ ամբողջովին առած է Քրիստոսի լուծը իւր վերայ:

3. — Փիւղճը:

Ձեռնադրողը ձեռնադրելոյն կուտայ փիւղնը իբրեւ (1) «գրահ արդարութեան ի ձեռաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոս»:

(1) Մայր մաշտոց, ի կարգի ձեռնադրութեան:

սիւ. երբ հոգեւորականք փիւղն զգենլով կը ծածկին անոր մէջ, պէտք է յիշեն որ այլ ևս իրենք իսպառ ձեռնթափ եղած են աշխարհէն կամ աշխարհային բաներէ:

4. — Շուրջա՞նը:

Շուրջա՞նը հոգեւորականին փրկութեան հանգերձը և ուրախութեան պատմունքն է, և երբ քահանայն կ'զգենու զայն ի ժամ Ս. Պատարագին, կ'աղօթէ առ Աստուած, որպէս զի անով պատրաստութիւն ընդդէմ ներգործութեան չարին:

5. — Վեղարը:

Վեղարը որ Անտոն ճգնաւորէն մընացած է, չէ այլ ինչ, բայց եթէ իւր իսկ նշանակութեամբ «քօղ» պարկեշտութեան. վեղարը միայն վարդապետաց չէ յատուկ, այլ ի հնունմ աշխարհէ հըրաժարած կրօնաւորք ևս ունէին, և մինչեւ իսկ դեռ ի ներկայս Նոր Զուգայի կուսանաց վանուց սարկաւազուհիք ոմանք՝ քաջ գիտեմք թէ՛ վեղար կը դնեն և փիւղն կ'զգենուն յեկեղեցւոյ:

6. — Կամելաւկա՞ն:

Կամելաւկան խորհրդաւոր նշանակութիւն երբէք չունի, այլ քահանայներու համար պատուոյ գլխարկ մ'է՛ գոր եկեղեցական պետերը կուտան արժանաւոր նկատուածներու, ինչպէս կուտան նաև խաչ, նշան, և այլն: Պէտք է գիտնալ թէ՛ կամելաւկայի ձեւով փակեղ, նոյնպէս քահանայից պատուոյ գլխարկ տալու սովորութիւն չկայ ի Տաճկաստան:

7. — Ինչո՞ւ տարբեր է մեր և ռուսաց շուրջաճնեղու ձեւերը:

Գիտեմք թէ՛ ռուսաց ինչպէս դաւանութիւնն, նոյնպէս զգեստուց, անօթից և ծիսական ձեւեր ընդհանրապէս Յունական են. քանի որ Հայոց, Յունաց և Հռովմայեցոց գլխաւոր եկեղեցիք ազգութեամբ, հաւատոյ դաւանութեան ու վարդապետական էական կէտերու տարբերութեամբ իրարմէ որոշուած են, բնականաբար ծիսական ու ձեւական շատ բաներու տարբերութիւն ևս պիտի մըտնէր իւրաքանչիւրի եկեղեցւոյ մէջ: Արդ՝ վերի խօսից մէջ համարելով մեր և ռուսաց շուրջաճնեղու ձեւոց տարբերութեան պատճառն կամ բացատրութիւնը, սա եւս կը յաւելում թէ՛ ինչպէս մեր եկեղեցւոյ վերաբերող ամէն ինչ իւր խորհրդաւոր ու բարոյական նշանակութիւնն ունի, նոյնպէս ուրիշ քրիստոնեայ եկեղեցեաց վերաբերողք ևս ունին. շատ բաներ ալ կան որ արդէն ամէն եկեղեցիք մի և նոյն նշանակութեամբ ընդունած են:

8. — «Ինչո՞ւ Ձատիկէն մինչեւ Համբարձում անմիջոց ուտիք է և մինչեւ Հոգեգալուստ պսակ չը լինիր»:

Մեծի պահոց հոգեւոր սգոյ, տըրտ-

մութեան և ապաշխարանաց օրերէն վերջ, Քրիստոսի Տեառն մերոյ փառաւոր յարութեան յիշատակի առթիւ կ'արժանանա՞ք հոգեւոր ու մարնաւոր ուրախութեան, և որովհետեւ եկեղեցին ամբողջ քառասուն օր յարութեան տօն կը կատարէ, ուրեմն իւր որդիքն ալ ազատ են ի պահոց և յապաշխարանաց. կամ Աւետարանի լեզուաւ խօսելով՝ քանի որ եկեղեցւոյ փեսայն՝ Քրիստոս՝ այդ աւուրց մէջ մեզ հետ է, կարելի է միթէ հոգեւոր հարսանեաց մանկանցս ի սուգ մտանել: Գալով Պսակի մասին, թէ և Պսակը սուրբ է և եկեղեցւոյ եօթն խորհուրդներէն մին, սակայն ի սրբոց հարց եկեղեցւոյ այնպէս տնօրինուած ու կարգադրուած է որ պահոց և Տէրունի օրեր չլինի. ըստ որում առաջինը հոգեւոր սգուոյ և վերջինը հոգեւոր ուրախութեան օրինակ լինելով, պատշաճ դատուած է անոնց միջին աւուրց մէջ կատարել այդ խորհուրդն:

9. — «Մկրտութեան ժամանակ մենք կնքամայր չունինք. ինչո՞ւ ռուսներն ունին և ի՞նչ կը նշանակէ այս»:

Թէ ինչո՞ւ մենք կնքամայր չունինք, շատ պատճառներ կան. բայց ես բաւ կը համարիմ յառաջ բերել մէկ ընդհանուր՝ և մէկ մ'ալ հարցի առնչականէն: Նախ որ եկեղեցւոյ եօթն խորհրդոց կատարման և մասնակցութեան իրաւունքը արանց տրուած է և ոչ կանանց. երկրորդ, քրիստոնեայ մը կը ծնանի կրկին, ի հոգւոյ և ի մարմնոյ. մեր մարմնաւոր ծնողք յայտնի գոլով, մեր հոգեւոր մայրն է եկեղեցին կամ Ս. Աւագանը. և հոգեւոր հայր կը լինի կնքահայրը՝ որուն վերայ սրբազան պարտաւորութիւն կը ծանրանայ իւր գրկած երեխայն հոգեւոր կըրթութեամբ դաստիարակելու. գալով այն հարցին թէ՛ ինչո՞ւ ռուսներ ունին կընքամայր, այդ ալ կարելի է վերագրել իրենց եկեղեցւոյ հարց թոյլտուութեան. անոնց տկար սեռը կը մասնակցի նաև Պատարագի արարողութեան որ զանազան տեսակէտովք անձա՞հ է. ուրեմն չ'արժէր յիշել որ՝ մեր ուղղափառ Ս. եկեղեցւոյ արարողութիւնք և ծէսք որքան գեղեցիկ ու վայելուչ են, այնքան եւս համապատշաճ իւր պատկառելի Սրբութեան:

10. — «Ինչո՞ւ հարսը փեսային աջ կողմը կը կանգնի և ոչ ձախ»:

Գիտեմք թէ՛ ամուսնութեան խորհուրդոյն սկիզբը եղած է մեր նախածընողներէն, և որովհետեւ առաջին կինը Ադամայ կողէն աջովն Աստուծոյ ստեղծաւ, այնու խորհրդով փեսայն զհարսն ալ կողմը կ'առնու եկեղեցի գացած պահուն. իսկ երբ երեսն անտի, հակառակ կողմով կ'երթան ի տուն, այնու նշանա-

կութեամբ՝ զի պատրանօք կնոջ պատ-
ճառեցաւ մարդկային անկումը ի ձախ
կողմն դրախտին . բայց ի տան հարսան-
եաց դարձեալ կինը զաջմէ փեսային կը
նստի, ըստ որում մեր նախամայր՝ զրախ-
տին մէջ Ադամայ աջ ու բարձրագոյն
կողմը դրուեցաւ, ըստ ասից Սրբոց հարց
եկեղեցւոյ :

Ս. Երուսաղեմ (Շարունակելի)
Դ. Վ. Յ

ՔԵՐԹՈՂ ԵՒ ՇԻՆԱԿԱՆ

Ա. Ա. Համարդարթան

Քերթոյ

Ըսէ՛, խնդրեմ, բարի ծերունկ,
Դեռ շատ ճամբայ կա՞յ մինչ ի գիւղ .
Տե՛ս, կը սքփփի ջրս դին գով շուք
Ու չեմ տեսներ ծըխարձակ հիւղ:

Շինական

Նոր կը շիկնի լոյսն արեւուն
Եւ կը մարի ամպն ոսկեթել .
Երե շտապես՝ այս իրիկուն
Դու շինավայրն կըրնաս օրել:

Քերթոյ

Ո՞ն հոգ չէ, ժիր կը բալեմ ես:
Միայն ըսէ՛, կա՞յ շուք մօտ տեղ .
Կուգեմ լըւալ փոշոտ երեսս
Ու գովանայ չը մըտած գեղ:

Շինական

Երբոր հասնիս հին կաղնոյն տակ,
Հոն կը տեսնես փոքրիկ առուակ
Որ հողն ի վեր խոխոջելով
Կը ծաւալէ ջրերն յըստակ:

Քերթոյ

Այնքան չըքնաղ է այս գաւառ,
Եւ կը պըճնի հագար երանգ
Որ դիտելով շուքս անդադար
Ես չեմ ըզգար բընա խոնջանք:

Շինական

Ես այս հողին վըրայ ծընայ,
Եւ իմ պապերս հոս կը հանգչին,
Բայց զայն բողած նոյն իսկ հիմայ,
Ես կեքրայի հողն օտարին:

Քերթոյ

Իսկ կը քըւի ինձ ալ որ միշտ
Ես կ'ապրեի հոս խաղաղիկ,
Մոռցած ամեն գրկանք ու վիշտ
Այս բընութեան մէջ գեղեցիկ:

Շինական

Չորս դին ժայռեր, չորս դին անտառ,
Եւ լեռներու մըրրիկն անեղ
Ապակահիջ այգւոյն դալար —
Որջա՛փ տըխուր է կեանքն այստեղ:

Քերթոյ

Մընաս բարով . խեղճ ծերունիս,
Չըքնաղագոյն եւ անխնայով
Մեզ կ'երեսայ վայրն աշխարհիս
Ուրկէ կ'անցնինք միայն երգով:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵՑՆ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ժամը ութէն վերջ երբ Մեծ Շուկան
մոնենք, կը տեսնենք որ լրագրաց ան-
ձայն և ձայնաւոր ցրուիչներուն երեւ-
նալն, ուշադրութիւն դրաւած, պահ մը
լռել կուտան Հայ խանութպաններու գո-
ռում գոչումը, կը դադրին իրենց բարձ-
րաձայն, անշահ և շնորհազուրկ հրաւէր-
ներէն առ յաճախորդս և գլուխին կա-
խած օրուան թերթերուն վրայ, հետա-
քրքիր ոգւով, ընթերցասիրի մը տենջո-
վը կը կարդան ու կը կարդան: Ներքին
ու արտաքին լրերէն զատ կը կարդան
նաև տեսութիւնները, քօնիկները,
զուարճալիքները, ոտանաւորները, բո-
լորը վերջապէս անխտիր: Եւ այսօր կա-
րող ենք գէթ Պօլոյ ընթերցասիրու-
թեան մասին գոհունակութիւն յայտ-
նել: Ի՞նչ է պատճառը: Գողովորդը ո-
րո՞ւ կը պարտի զայս: Ժամանակի պա-
հանջմանց: Լրագրաց: Դպրոցներո՞ւ:

Ժամանակն իւր պահանջմունքները
ժողովրդին կ'իմացնէ, դպրոցն ու լրա-
գիրը զայն կ'իրագործէ:

Ունի՞նք դպրոց . . . Ի՞նչ հարկ խօ-
սիլ, ամէնքս ալ գիտենք: Ունի՞նք լրա-
գիր . . . ասոր վրայ խօսինք քիչ մը:

Լրագրութիւնը մեր մէջ նոր բան չէ,
բայց բաւական արիւթիւն պէտք է զայս
խոստովանելու համար, զի արդի լրագ-
րութեան գլխաւոր կարծուած դերա-
կատարներ, վերջին նորաձեւութեանց
վրայ ձև առած գործներ, յանկարծահաս
հրապարակագրեր, կ'ուրանան հինը,
կ'արհամարհեն հին հեղինակութիւնը,
կ'այպանեն անդուլ աշխատողները, ուս-
պէտ կը հռչակեն անոնց ձեռնհասու-
թիւնը, և իրենք գիրենք գործին գա-
գաթն հասած կը նկրտին ձանձնել, ա-
ռանց խորհելու թէ բնական է այսպի-
սի բան մը, առանց դիտելու թէ մտա-
ւորական զարգացման յառաջդիմութեան
օրէնքներն որո՞նք են. եթէ ասոնք
մեզ ըսեն թէ խելքի ու հանճարի «ա-
րեւելեան երկաթուղւոյ» մը մեծ թիւը
զարկած է մեզ, յայնժամ ըսելիք չու-
նինք: Եթէ կ'արհամարհեն ասոնք
հիները, չարհամարհէին գէթ տրամա-
բանութիւնը . . . որ երբէք չի պիտի
հիննայ: Բանանք Մանգոսմի առաջին
թիւը, զարմացած պիտի մնանք թէ Փա-
նոսեան է ֆէնտի իւր թափանցկոտ աչե-
րով տեսած է ազգին անհրաժեշտ եղող
պէտքերը և շարունակած է հոգալ և
հայթայթել ինչ որ կարելի էր Հայ ազ-
գին զարգացման համար, և մեր նո-
րեւելիները գինք այս աւուր յոգնած
վիճակէն դատելու չեն բնաւ. Իւթիւ-
ճեան է ֆէնտի տարիներու երկայն շարք
մը թողած է՝ գեղազարդեալ հրապարա-

կագրական անընդհատ և բազմօգուտ
աշխատութեամբ, և անոնք որ իւր սրտի
արիւթիւնն ալ կասկածի ներքև կը
ձգեն, միակողմանի աղբիւրներէ կ'առ-
նուն իրենց տեղեկութիւնները. ազնիւ
է, կը խոստովանին զինք ձանձողներ .
եթէ ճամբուն վրայ չը բարեւեր երի-
տասարդ գրագէտները, հպարտութեան
մը վերագրելու չէ զայդ. կարճատես է,
պէտք ենք գիտնալ ամէնքս ալ:

Իբր հրապարակագիր միայն այս եր-
կուքը յիշելով, առանց խօսելու Մա-
մուրեաններու կամ ասոնց աշխատակ-
ցող ճշմարտապէս գրագէտ մատենագիր-
ներու վրայ, փնտռենք թէ մեր նոր
լրագրութիւնը ի՞նչ առաւելութիւններ
ունի, ի՞նչ հրապոյր կը ներշնչէ ընթեր-
ցող հասարակութեան:

Վիպասանական դպրոցներու կռիւ,
իրապաշտ, բնապաշտ, բոմանթիք (վի-
պական) ևն. ևն. առանց երբէք մեզ
օրինակաւ մը պարզելու խնդիրը: Զուր
աւելորդաբանութիւն. վէպ մը, աշխա-
տութիւն մը. թերթերէ դուրս, խընդ-
րոյն լուծումը կը պահանջուի: Տաղան-
դաւոր գրագէտին, կեանքը ուսումնա-
սիրող իմաստասէրին նիւթ չի պակսիր
մեր մէջ, փոխանակ տեսութիւններով
ժամավաճառ ըլլալու:

Երբեմն ոտանաւորներ, ծառերու
տակէ, իրական կեանքէ ըսելով, տա-
ղաչափութեան դէմ չարաչար մեղան-
չելով, արգահատելի հետեւողութեամբ
և խոտելի օտարամուլութեամբ. գրակա-
նութիւնը Գաղղիացւոց միայն յատկաց-
եալ ձանձնելու տխմար գիտաւորու-
թիւնն ու համոզումը: Միւս կողմանէ
քեֆարիկներով, իրենց սլափանկութե-
ան, երիտասարդութեան մէջ անցու-
ցած օրերն, աստղիկորդոյն ձեռք կառ-
կառած և այսօր դաստիարակութեան,
բարոյականութեան փողն հնչեցնել, ևն.
ևն., այս և այսօրինակ խոտոր ուղղու-
թիւն մը ընդգրկած են հրապարակա-
գիրը ոմանք, և մինչև ուսմիկ դասուն
իմացուցած իրենց ձայնը, որք լի հետա-
քրքրութեամբ կը հետեւին լրագրական
գրուածոց, կը խնդան, կ'ըօսնուն,
կ'օգտուին երբեմն ալ և . . . ընթերցա-
սէր կը դառնան:

Ահա մեր արդի լրագրութիւնը . . .

Փաղաքական թերթ մը չէ կարող
գրականութեան ծառայութիւն մը մա-
տուցանել, այս ճշմարտութիւն մ'է, իսկ
երբ մեր օրական թերթեր այդ երկու
պաշտօն միանգամայն կ'ստանձնեն, և
լրագրէն դուրս գրականութիւնը չեն
մշակեր, Հայ մատենագրարանը չեն ճո-
խացներ աշխատուած և խնամեալ եր-
կերով, գովելի ուսումնասիրութեամբ:
Երբ դպրոցէն ամէն նոր ելնող աշա-

կերտ բուռն անհամբեր կ'զգայ գրեթե թերթի մէջ, առանց ճոխացնելու տակաւին շատ դատարկ գլխուն պաշարը, առանց ճանչնալու կեանքը, և կը փայփայուի շատերէ և կը ծանօթանայ մեծամեծ մակերևորներով. բնական է որ ճշմարիտ գրագէտն զգուսնօք կը հեռանայ հրապարակէն և քամահրելով աշխարհի ընթացքը, կ'ըսէ իւրովի. «այս է բնութեան օրէնքը» . . .

ԱՐՇԱԻՐ

ՆԵՐԿԱՅՆ ԹԱ ԱՊԱՌԱՅՆ

Թեթեւամիտք և երկչոտք բոլորովին կը տարբերին իրենց կարծեացը մէջ։ Առաջինը՝ միայն ներկայով կ'ապրին, իսկ վերջինը՝ միշտ իրենց աչերն յառած դէպ յապագայ երջանկութիւն, վրդով կեանք կ'անցնեն։

Անշուշտ երկու կողմն ալ նուազ ծիծաղելի չեն։ Նրբ մին ներկայով կ'ապրի, կ'ըսեմ, չունի բնաւ իւր ոչ մի արարքին գիտակցութիւնը. տուած ինքզինք ժամանակի հոսանքին, բաղխելով ժայռէ ժայռ, իւր երեսն ի վեր ժայթկող վըշտերը կը փոխէ վայրկենական հառաչով մը, իսկ հաճոյքները գգուող երազով մը երջանիկ կ'զգայ իւր տնձը։ Միւսը, արհամարելով ներկայն . . . միշտ հեռուէն կ'սպասէ անլուռ և աներեւակայելի երանութեան։

Անցեալը, հաճոյլի կամ դառն, միշտ վիշտ մ'է ներկային մէջ անոնց՝ որոնք թէպէտ ջախջախեալ սրտով, կը յուսան և կ'սպասեն՝ աւաղելի լաւատեսութեամբ մը՝ կենաց մթին երկնից վրայ նոր և շողշողուն արեգական մը ծագման։

Ներկայն իրական է, ապագայն անվրտահ։ Ստոյգ է զր կ'ըսէ Յոյն հեղինակն ապագային համար. «Ամէն ինչ աստուածոց ծնգանց վրայ է»։

Յոյսը, կարծեցեալ գալիքի մը կեղծ ու պատիր յառաջընթացն, ներկային մէջ մեր ունենալիք խոհականութիւնը խաթարելով և մեր կենաց շաւղին վրայ տառապանաց տատասկը բուսցնելով, կը հասցնէ զմեզ մինչեւ գերեզմանի եզրն, և իւր նողկալի հրապոյրն, խողովոտելով մեր մտաց աչերն, անուղղակի կերպով կ'արգիլէ զմեզ չհետեւելէ մեր երանելի նախորդաց. «Իւրաքանչիւր օր առանձինն, առանձին կեանք մ'է»։ Ահա՛ իրական կեանքը, և երբ մէն մի օր ճշմարիտ պատկերն է կենաց մէջ ներկայանալիք միւս օրերուն, ինչո՞ւ ուրեմն չգիտնամք հեգնող անտարբերութեամբ գիմադրաւել վշտաց, փոխանակ ներկայն անտանելի դարձնելու մեզ, ի խնդիր անվստահ երջանկութեան։

Հեռանալ ցաւերէ կամ կարենալ զայնս մեղմելու գտնել մեր ներքին խաղաղութիւնը, միակ միջոցն է երջանկանալու։

Դեռ առաջին քայլը դուրս նետած վարժարանի սեամէն, ոսկեղենիկ երազներու գլխու պտոյտով մը, երանաւէտ յոյսերու ուռճացեալ սրտով և յանձնապատան ընթացքով մը կուգայ անյապազ բաղխիլ աշխարհի թափեր վրայ յուսախաբութեան ժայռին, և կորուսած հաւասարակշռութիւնը՝ կը դեգեւի յեղյեղուկ արկածից հիւսը. այլ ևս անկարող դարմանելու բաղխումէն ստացած խոցն ու վէրքն, անիմաստասէր կրթութեան մը զո՛ւ, դարձած ապիկար՝ անձին, ումպէտ իւր նմաններուն, մարմինը ներկային, սիրտն և ուշը ապագային մէջ կուգայ և կ'անցնի։

Ո՛վ էր, ի՞նչ ըսաւ, և ո՛ւր գնաց։ Ունայնութեան մէջ հետք չձգուիր, ունայնութիւնն մեզ արձագանգ չտար։

Ա. ՀԱՄԲԱՐԳԱԹԱՆ

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Շարունակութիւնն են վերջ

67. Սուպին, Մելքիսեդեկ Պատրիարք Կ. Պօլսոյ։

68. Տերեայի, Գրիգոր Վրդ. Սամուէլեան, Առաջնորդ Զմիւռնիոյ վիճակին. երգած է Հայերէն և Թուրքերէն։

69. Շիրիքի, Յովհաննէս Կարնեցի կամ Նրեւանցի, երկու աչաց տեսութեանէն ևս զուրկ։

70. Սերվերի, Պրուսացի Հայ ոմն։

71. Հայաքի, Սուքիաս Տփիսեցի։

72. Շահպազի, Պօղոս Մաղխացի։

73. Մազլուպի, Տէրվիշ Յովհաննէս Կեսարացի, երգած է Թուրքերէն։

74. Ֆրքուքի, Հաճի Յարութիւն Մաղխացի, երգած է Թուրքերէն։

75. Մայիֆի, Յարութիւն Ղարաղանցի, երգած է Հայերէն. սորա մի աչքն կոյր էր։

76. Տեհրի, Յովհաննէս Էնգարէցի, երգած է Թուրքերէն. սա իւր ժամանակին մեծ հռչակ հանած է և իւր երգերուն մէջ երեւելի կտորներ ունի ինքն Հռովմէական Հայ էր։

77. Շավգի, Յովհաննէս Էրզրումցի, երկու աչօք կոյր, երգած է Թուրքերէն։

78. Սեգալի, Աղաճան Նոր-Պայազխոցի, երգած է Հայերէն և Թուրքերէն։

79. Նասիպի, Սօզլատցի Հայ ոմն։

80. Իւշլալի, Խաչատուր Աղեքսանդրապօլցի։

81. Սեյրանի, Տփիսեցի Հայ ոմն։

82. Նիմուսի, Հաճի Յարութիւն Էրզրումցի, երգած է Թուրքերէն։

83. Բուխշեցի, Հաճի Յարութիւն Էրզրումցի, երգած է Թուրքերէն. սա ամուսնացած է Պանտրմա, և այժմ կը գտնուի անդ։

84. Կիւզէլի, Նահապետ Աղեքսանդրապօլցի, երգած է Հայերէն։

85. Բուսմանի, Հաճի Ղազար, երգած է Թուրքերէն և Հայերէն. սորա ո՛ւր տեղացի լինելն մեզ յայտնի չէ։

86. Սիրուքի, Թագուր Մաղխացի, վերի թաղէն։

87. Էյրեքի, Էլբազ Հասան Գալէցի։

88. Սեյրանի, Խորչա Արսլանեան, Կեսարիոյ Մուշնուսուն գիւղէն, ունի գրած բաւական բանաստեղծութիւններ Թուրքերէն, որոնց մեծագոյն մասը զաւեշտական են, և այժմ իսկ կը գրէ. սա հեռաւորապէս ազգական է ողբացեալ Գ. Օտեանի, և եղբօր թոռ հանգուցեալ Ստեփան Եպիսկոպոսի, Առաջնորդին Կեսարիոյ։

Հետեւեալք ևս Հայ Աշուղներ են, որոց իսկական անուններն, ինչպէս նաև ո՛ւր տեղացի լինելն մեզ յայտնի չեն։

Տօսքի	Նաքզգի	Նազիրի
Հայալի	Տիւրկերի	Ուրուստամ
Սետալի	Պեկկի	Սապրի
Պիշարի	Ճիւխունի	Քեմալի
Կիւֆարի	Սերտարի	Շիրեարի
Մէլլի	Ճեհտի	Չարպի
Մեվանտի	Սուլթանի	Թեքմիլի
Տերկեանի	Չերկերի	Չիւլալի
Պիւլպիւլի	Քեհնի	Էֆրեարի

Կը խնդրուի հետաքրքիր հասարակութենէ, որ եթէ գիտեն սոյն Աշուղներու իսկական անուններն, և եթէ գիտեն նաև այլ Հայ Աշուղներ, թող բարեհաճին հրատարակել Մաղիկի միջոցաւ, որպէս զի սոյն հաւաքածոյն ամբողջութիւն մ'ունենայ։ Մենք յառաջիկային միտք ունինք յիշեալ Աշուղներու ամէն միոյն համառօտ պատմութիւնն, և իրենց երգած երգերէն մէկմէկ օրինակ իբրև նմոյշ հրատարակել՝ առանձինն տետրակով մը։

1892 Օգոստոս 22
Կ. Պօլիս

ՈՒՍՈՒՅԶԱՄԱՆ ԺՈՂՈՎ

Դպրոցական արձակուրդներու առթիւ, առաջարկութեամբ Ասուլմական Խորհրդոյ և որոշմամբ Քաղ. Ժողովոյ, մայրաքաղաքիս ուսուցիչք ի խորհրդակցութիւն հրաւիրուելով, Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ երեք նիստեր ունեցան օգոստ. 10ին, 18ին և 24ին։ Ներ-

կայից թիւն ամէն անգամ եղած է ոչ նուազ քան 52: Երեցած են նաև գաւառական ուսուցիչներ, որոնք արձակուրդն եկած էին ի Պոլիս անցունել:

Ա. և Բ. նստերուն մէջ ժողովն զբաղեցաւ սա խնդրոյ վթէ, « Մեր նախակըրթարանաց արդի վիճակն արդիւնաւոր եղած է, և եթէ ոչ, ի՞նչ նոր կազմակերպութիւն հարկաւոր է ». և յետ խորհրդակցութեանց, համամտութիւն գոյացուց թէ՛ « Պէտք է հիմնել նախակըրթութիւնն Տարրական, Միջին և Բարձրագոյն երկամեայ երեք շրջաններու վրայ, որք՝ կրկնուելով և հետզհետէ ընդլայնուելով՝ աւանդեն նախակըրթութեան ծրագրին առարկայները »:

Գ. նստին մէջ ժողովն զբաղեցաւ սա խնդրով թէ՛, « Նախակըրթութեան ծրագիրն ի՞նչ անհրաժեշտ ուսումներ պարտի ունենալ », և յետ խորհրդակցութեանց, համամտութիւն յայտնեց թէ՛ Նախակըրթութեան ծրագիրը պարտի բովանդակել հետևեալ առարկայները .

1. Կրօնական, բարոյական և քաղաքացիական կրթութիւն .

2. Ընթերցումն և գիր .

3. Հայ լեզու և գրականութեան տարերք, օսմաներէն, ու Փրանսերէն (այս վերջինը կամայական) .

4. Պատմութիւն և աշխարհագրութիւն .

5. Տարերք բնապատմական, բնագիտական և ուսողական գիտութեանց, կիրառմունք նոցին՝ երկրագործութեան, առողջապահութեան, ճարտարութեանց, կիրառական աշխատութեանց մէջ, ձեռական աշխատութիւնք և գործածութիւն գլխաւոր արհեստից գործերուն .

6. Տարերք գծագրութեան, կաղապարման և երաժշտութեան .

7. Մարմնամարզք .

8. Ասեղնագործութիւն և առտնին տնտեսութիւն աղջկանց համար :

Ուսուցչական ժողովոյ չորրորդ և վերջին նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի, հետեւեալ խնդրոց վրայ խորհրդակցելու համար .

1. Մեր մէջ մանկավարժական մարմնոյն կազմութիւնը կը պատասխանէ՞ ճշմարիտ նախակըրթութեան մը պահանջներուն, և եթէ ոչ, ի՞նչ դարման հարկաւոր է .

2. Տղոց ֆիզիքական, մտաւորական ու բարոյական կարողութեանց զարգացման հիմնական եղանակներն որոնք են .

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԲԱՌԱՐԱՆԻ

Ագանգիք . — Մարդահաճութիւն .

Ազգական . — Գանձ՝ եթէ բարի և հարուստ է, գլխու փորձանք եթէ աղքատ է :

Ազգր . — Որքան կը ծափահարուի թատրոններու մէջ և որքան փառասէր հեղինակներ դերասանուհւոյ մը ազգրին ուղղուած ծափահարութիւններն իրենց թատերգութեան կը վերընծայեն :

Աղջիկ . — Ապրանք մը զոր վաճառելու համար դրամ տալ հարկ է գընդին :

Ամենակեր . — Շուայլութեան բերանը : Այցետոմս . — Տոմսերու այցելութիւն :

Անամօքութիւն . — Կարծեաց ազատութիւն :

Անառիկ . — Հաւատարիմ կնոջ սիրտը :

Անասելի . — Ճշմարտութիւն :

Անբնակ . — Այն տեղերն ուր առաքինութիւն կը բնակի :

Անխիղճ . — Անոնք որ միշտ կ'ըսեն, « ձերքս խղճիս վրայ դնելով կ'երգնում որ . . . » :

Անկողին . — Գերեզմանին մանրանկարն, ուսկից ամեն օր յարութիւն կ'առնէ մարդ :

Առակ . — Ճշմարտութիւնն դիմաւոր :

Առանձին . — Երբ տգէտներու քով գտնուի ոք :

Առաջնորդ . — Ժողովրդեան ետեւէն գնացող :

Առողջութիւն . — Բժշկաց թշնամին՝ զոր սպաննել կ'աշխատին և շատ անգամ ալ կը յաջողին :

Արձագանգ . — Գերձակ երեսփոխան մ'որ կը կրկնէ ինչ որ ըսէ այն երեսփոխանն որուն երեք չորս ձեռք հագուստ կը ձեւէ և կը կտրէ տարին :

Արձան . — Տնկուած մեծ մարդոց վըրայ կը բուսնի :

Արդեաւանուք . — Աչաց փեղկերը : Թ. Թ. ՊԱՐՈՆԵԱՆ

ՁԵՆՈՐ ԷՔ . ՁՈՒՆԱՃԵԱՆ

Հանրածանօթ երաժշտապետ Մեծ Տիգրան էֆ. Չուխաճեանի եղբայր՝ ոսկերիչ Մեծ Չենոբ էֆ. Չուխաճեան, որ ոսկերչական արհեստին մէջ առաջնակարգ ճարտարութեան փայլուն համբաւն ունի, այս անգամ շինած է՝ նըրբարուեստ և ծանրագին կաղամարի կազմած մը, զոր պալատական մը յանձնարարած է մայրաքաղաքիս յունազգի երեւելի գոհարավաճառ Քոնսթանթնարա եղբարց՝ Օգաստ Սուլթանին մատուցուե-

լու համար Նորին Վեհափառութեան գոհակալութեան տարեդարձին առթիւ, և Քոնսթանթնարա եղբարք՝ այդպիսի կարեւոր գործի մը շինութիւնն չը կըրնալով ուրիշ վարպետի վստահիլ, յանձնած են Չենոբ էֆէնտիի՝ որ ամենայնիւ արդարացուցած է իւր վրայ դրուած վստահութիւնը :

Կաղամարի կազմածքն ճարտարութեամբ կան հրաշակերտ մ'է ինքնին, բնութայնով զարդարուած համակ ոսկի, կեդրոնին մէջ ցլացնելով Օսմանեան փառապանծ մահիկն աղամանդակուռ, ամբողջովին ձեռակերտ, առանց իւր մէջ ունենալու թափծու կամ մեքենայով շինուած որ և է մաս :

Կարծէ յիշատակել այսպիսի առաջնակարգ արուեստագէտներու անունն, մանաւանդ երբ Չենոբ էֆ. կը գանգատի թէ ինքը Հայ լինելով, իւր ճարտարութիւնը ցարդ և ոչ մէկ Հայու կողմանէ գնահատուած է, մինչդեռ Յոյնք են որ կը քաջալերեն զինքը՝ կարևոր աշխատութիւններ վստահելով իրեն :

Չուխաճեանք կարծես ամբողջ գերդաստանով արուեստագէտ ծնած են : Աւելորդ է խօսիլ երաժշտապետ Չուխաճեան Տիգրան էֆէնտիի մասին : Քաջ մեքենագէտ է սոցա մէկ ուրիշ եղբայրը, Պետրոս էֆ. Չուխաճեան : Նշանաւոր արուեստագէտ էր նաև իրենց հայրը, որուն կենսագրութիւնը պիտի հրատարակուի մէկ օր այս էջերու մէջ :

ԳԱՌՆԻԿ ՀԻՍՍԱՐԼԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱԳՕՂ

Վկայեալ փաստաբանք Օսմ. Կայսր. իրաւաբանական վարժարանէն :

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ հաստատուած են ի Ղալաթիա, Տէմիր խան, թիւ 22, և կ'ստանան թէ՛ մայրաքաղաքէս և թէ՛ գաւառներէ յանձնարարելի հուգուգի, չէրիի, Արեւտրական ու պատժական դատարանաց վերաբերեալ ամէն տեսակ դատեր և Գործառնութիւններ, մենաշնորհներու (իմթիաղ) համար ձեռնարկութիւններ, ինչպէս նաև պաշտօնական գրութեանց աղերսագրոց, պայմանագրութեանց, և այլոց խմբագրութիւն կամ թարգմանութիւն ամէն լեզուալ :

ԾԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎՈՅՆԵՐԱՐԵՐԻՆ

Ս. Դաւթեանի . դպրոցաց համար անհրաժեշտ գիրք մը . գին 3 զրուշ :

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ

ՏՊԱԿԻ. ՄԻՀՐԱՆ Ե. ՓԱԺԱԶԵԱՆ

Կ. Պոլիս, Զիւլայիլի խան . Թիւ 18, 19, 21